AZG NEW 1.QXD 8/18/2009 11:32 PM Page 1

Ազգ Azg

19 ՕԳՈՍՏՈՍ 2009 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 146 (4282)

ISSN: 1829-1651
9 771829 165003 09146

## Սպասվում է ջերմաստիճանի կտրուկ նվազում մինչեւ 26 աստիճան

Ինչպես տեղեկացանք «Հայհիդրոմետ ծառայության օդերեւութաբանության կենտրոնի» պետ **Գագիկ Սուրենյանից**, օգոստոսի 19-ի երեկոյան օդերեւութաբանական իրավիճակը հանրապետությունում կփոխվի, հյուսիս-արեւմուտքից հանրապետություն կթափանցի ցուրտ մթնոլորտային ճակատ, օդի ջերմաստիճանի նվազում կնկատվի օգոստոսի 20-ից հետո: Իսկ 21-ին օդի ջերմաստիճանը հանրապետությունում կնվազի 4-6 աստիճանով: Օգոստոսի 20-21-ը տեղ-տեղ սպասվում են անձրեւ եւ կարկուտ, քամի, որի ուժեղացումը կլինի մինչեւ 25 մետր/վրկ. արագություն: 21-23-ը հանրապետությունում սպասվում է ցածր ջերմային ֆոն, ներկա մինչեւ 34 աստիճան ջերմությունը կնվազի՝ հասնելով 26-27-ի: Օգոստոսի 23-ին կդիտվի տեղումների դադար: Օգոստոսի վերջին տասնօրյակում օդի ջերմաստիճանը կտատանվի 27-30 աստիճանի շրջաններում:

## Ումի՞ց ի՞նչ էիք թաքցնում

### *Հարցազրույց Սամվել Նիկոյանի հետ*

***Երեկվանից արձակուրդում գտնվող Ազգային ժողովի փոխնախագահ, մարտի 1-ի դեպքերը քննող հանձնաժողովի նախագահ Սամվել Նիկոյանի հետ «Ազգը» զրուցեց մարտի 1-ի դեպքերի վերաբերյալ սեպտեմբերին ԱԺ-ին ներկայացվելիք զեկույցի եւ ներքաղաքական խնդիրների մասին: Վերջին թեմային կանդրադառնանք հաջորդ համարներում:***



**- Պարոն Նիկոյան, արդեն մամուլում ենթադրություններ կան, որ զեկույցով կարող եք տրորել ե՛ւ իշխանական կողմի ոտքը, ե՛ւ ընդդիմությանը չբավարարել:**

- Բազմաթիվ անգամ ասել եմ՝ ոչ իմ, ոչ հանձնաժողովի աշխատանքի նպատակը չէ բավարարել այս կամ այն կողմի ցանկություններն ու պահանջները: Մեր նպատակն է հնարավորինս, մեր կարողացածի չափով բացատրություններ տալ իրադարձություններին, որոնք ըստ էության տեղի են ունեցել բոլորի աչքի առջեւ, մեր ժողովրդի մեծամասնության համար բացատրություններ: Որ կլինեն մարդիկ, որոնց դա դուր չի գա՝ լինեն դրանք պետական մարմինների ներկայացուցիչներ, ընդդիմության լիդերներ, դա միանշանակ է, բայց նպատակը՝ ժողովրդի մեծամասնությունը ընդունելի զեկույց ներկայացնելու, կարծում եմ՝ խնդիրը մենք ինչ-որ չափով կլուծենք:

**- «Հայլուրով» վերջերս տեսանք այն կադրերը, որտեղ ոստիկանները ծեծում էին անզեն քաղաքացիների: Դրանք հանձնաժողովին էին տրամադրել լրագրողներ: Նմանատիպ կադրեր դեռ էլի՞ կարող են զարմացնել հասարակությանը, կա՞ն էլի այդպիսիք:**

- Այդ կադրերը ոչ թե հասարակությանը զարմացնելու համար են, այլ հանձնաժողովը դրանք տրամադրել է նախաքննական մարմնին եւ պահանջել, որպեսզի քրեական հետապնդում իրականացվի այդ ոստիկանների նկատմամբ: Մեր արսենալում այլեւս այդպիսի կադրեր չկան, ու չեմ կարող բացառել, որ միայն այդ կադրերով են սահմանափակվում այդ երեւույթները: Տեսեք, կոնկրետ այդ մասով, լոկալ իրավիճակներում ոստիկանությունը ոչ իրավաչափ, ոչ համաչափ գործողություն է իրականացնում:

*Տես էջ 2*

**ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՊՐՈՖԵՍՈՐ ՎԱՀԱԳՆ ՏԱՏՐՅԱՆԻ ՀԵՏ**

## «Թուրքական պատերազմական ատյանը նախադեպն էր Նյուրնբերգի»

***Հայտնի ցեղասպանագետ, Զորյան ինստիտուտի տնօրեն, Հայաստանի ԳԱԱ-ի արտասահմանյան անդամ, պրոֆեսոր Վահագն Տատրյանի եւ թուրք հայտնի պատմաբան Թաներ Աքչամի համատեղ աշխատությունը՝ «Ստամբուլում «Իթթիհատ վե Թերաքիի» դատավարության արձանագրությունները» գիրքը, մեծ արձագանք է ունեցել Թուրքիայում: Այս թեմայով պրոֆեսոր Տատրյանը համաձայնեց պատասխանել «Ազգի» հարցերին:***



**- Պարոն Տատրյան, ինչո՞ւ Թուրքիան գնաց այդ քայլին եւ Առաջին աշխարհամարտից հետո ստեղծեց դատական մի մարմին, որը քննում էր Հայոց ցեղասպանության մեջ մեղսագործ քաղաքական գործիչների գործերը:**

**- Նախքան քեմալական շարժման սկիզբը եւ զարգանալը, Առաջին համաշխարհային պատերազմի ավարտին, Թուրքիան ընկճված եւ հուսահատ վիճակում էր եւ մտավախություն ուներ, որ հայկական ջարդերի կապակցությամբ հաշտության պայմանները շատ ծանր պիտի լինեն իր համար՝ ոչ միայն որպես պարտված ազգի, այլեւ որպես ոճիրների գլխավոր դերակատար կառավարության: Այս մտավախությամբ, հաշտության պայմանները մեղմելու համար թուրք կառավարությունները 2 տարվա մեջ փորձեցին աշխարհին ցույց տալ, որ այս ոճիրները ընդամենը թուրք հեղափոխական փոքրամասնության գործն էին, եւ թուրք ժողովրդին չպետք է մեղավոր համարել այս կապակցությամբ: Այս առիթով որոշեցին գործնական քայլեր ձեռնարկել, եւ կազմվեց պատերազմական ատյան: Պատերազմական ատյանը մեծաթիվ նյութեր հավաքեց: Ինչպես հայտնի է, հանցագործությունների դեպքում նախաքննական շրջան կա՝ փաստահավաք, եւ այդ շրջանից հետո որոշում ընդունվեց, որ բավականին փաստեր կան դատը սկսելու համար: Փաստահավաք հանձնախումբը ղեկավարում էր Օսման Մասար անունով նախկին մի կուսակալ: Երկու ամսվա ընթացքում Մասարի այդ հանձնախումբը մեծ թվով փաստեր հավաքեց, հանձնախումբը մեծաթիվ վավերագրեր ձեռք բերեց: Ինչպես ասացի, թուրքերը պարտված էին, տրամադրված էին խոստովանություններ անելու, եւ Մասարի հանձնախմբի հավաքած նյութերը հիմք կազմեցին հետագա թուրքական պատերազմական ատյանի ամբաստանագրին:**

*Տես էջ 4*

## Վերստեղծվեց Արմենական-ՌԱԿ «Մասիս» ակումբը

Երեկ Մասիս քաղաքի տպարանում էին հավաքվել Արմենական-ՌԱԿ մի խումբ համակիրներ, որոնք ՌԱԿ հնագույն անդամներից Սուսաննա Ղազարյանի նախաձեռնությամբ որոշել էին վերստեղծել «Մասիս» ակումբը, որը նախկինում արդեն գործել էր: Հավաքին ներկա էին Արմենական-ՌԱԿ ատենապետ Արմեն Մանվելյանը, վարչության անդամներ Գայանե Մուրադյանը եւ Սիրո Գեւորգյանը: Վերջիններս պատասխանելով ներկաների հարցերին՝ նշեցին, որ կուսակցությունը ստեղծվում է ո՛չ միայն վերականգնելու համար Արմենական ավանդույթները, այլ նաեւ Հայաստանում նպաստելու քաղաքական նոր բեւեռի ձեւավորմանը:

Ներկաները վարչության անդամների առաջ բարձրացրեցին իրենց հուզող հարցերը, մարզի պրոբլեմները, հատկապես մատնանշելով տնտեսական եւ սոցիալական ծանր իրավիճակը:

Արմենական-ՌԱԿ համակիրները որոշում ընդունեցին անդամակցել կուսակցությանը եւ վերստեղծել «Մասիս» ակումբը: 25 հոգուց բաղկացած ակումբը ընտրեց 5 հոգանոց վարչություն, որի ատենապետ ընտրվեց Սուսաննա Ղազարյանը:

## Վթարված «Տու-154» ինքնաթիռի սեւ արկղերը դեռեւս վերծանման փուլում են

ԵՐԵՎԱՆ, 18 ՕԳՈՍՏՈՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Թեհրան-Երեւան չվերթն իրականացնող, հուլիսի 15-ին վթարված «Տու-154» ինքնաթիռի սեւ արկղերը դեռեւս վերծանման փուլում են: Ինչպես «Արմենպրես»-ին տեղեկացրին ՀՀ տարածքային կառավարման նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնից, արդեն հաստատվել է այն տեղեկատվությունը, որ թռիչքից 24 ժամ առաջ ինքնաթիռը Մինվոդիում ամբողջական տեխզննում է անցել եւ թռիչքի պահին գտնվել է գերազանց վիճակում: Ուսումնասիրությամբ պարզվել է, որ ինքնաթիռի շարժիչը խափանվել է հենց թռիչքի պահին, սակայն պատճառը դեռեւս հայտնի չէ: Շրջանառվող այն լուրերը, թե ինքնաթիռի ընթացքին խոչընդոտել է դրանում լիցքավորած 22 տոննա վառելիքը, անհիմն են, քանի որ մասնագիտական գնահատականներով՝ վառելիքի այդ ծավալը նորմայի սահմաններում է:

Ինչ վերաբերում է Թեհրան-Երեւան չվերթն իրականացնող «Կասպյան ավիաուղիներ» ընկերության կողմից զոհերի ընտանիքներին փոխհատուցում տրամադրելուն, ապա, նախնական գնահատականով, յուրաքանչյուր ընտանիքի կվճարվի 54 հազ. ԱՄՆ դոլար: Այժմ ժառանգների եւ իրավահաջորդների ճանաչման հարցն է քննարկվում: Նոտարական ծառայության կողմից համապատասխան աշխատանքներ իրականացնելուց հետո, ըստ սահմանված ժամկետի՝ 6 ամիս անց, փոխհատուցման գործընթացը կսկսվի:

## ՄԱԿ-ը դեկտեմբերն ընտրել է որպես Կիպրոսի խնդիրը լուծելու ամիս

ՆՅՈՒ ՅՈՐՔ, 18 ՕԳՈՍՏՈՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հայտնի է դարձել, որ Միացյալ ազգերի կազմակերպությունը պատրաստվում է ակտիվ գործողություններ սկսել Կիպրոսի խնդրի լուծման ուղղությամբ, ինչի համար կղզու խնդրի լուծման ամիս ընտրել է առաջիկա դեկտեմբերը:

Կիպրահունական «Ֆիլելեֆթերոս» թերթի համաձայն, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բան Կի Մունը հայտարարել է, որ հոկտեմբերի կեսերին Կիպրոս ծրագրած իր այցը հենց այդ նպատակն է հետապնդում:

Հենվելով ՄԱԿ-ի՝ Նյու Յորքի դիվանագիտական աղբյուրներին, թերթը գրել է, որ «Բան Կի Մունի այցի նպատակը Կիպրոսի հանրապետության նախագահ Դիմիտրիս Խրիստոֆիասի եւ կիպրաթուրքերի առաջնորդ Մեհմեդ Ալի Թալաթի միջեւ կղզու վերամիավորման հարցով ընթացող բանակցություններին լավատեսություն հաղորդելն ու Եվրոմիության կողմից դեկտեմբերին Թուրքիայի անդամակցության գործընթացին տրվելիք գնահատականի շարքում այն Թուրքիայի օգտին ծառայեցնելն է»:

## Տեր-Պետրոսյանը՝ Նիկոլի հայրական տանը

**Երեկ ՀԱԿ առաջնորդ Լեւոն Տեր-Պետրոսյանն այցելել է «Հայկական ժամանակ» օրաթերթի գլխավոր խմբագիր Նիկոլ Փաշինյանի հարազատներին՝ Իջեւանում գտնվող նրա հայրական տանը, բարոյապես աջակցելու համար անազատության մեջ գտնվող իր համախոհի ընտանիքին:**

**Տեր-Պետրոսյանը հարազատ է մնացել իրեն՝ հայտարարելով, թե իշխանություններն արդեն հանձնել են Ղարաբաղը..«Ցեղասպանությունը տվին, Ղարաբաղն էլ կտան, տված-վերջացած է արդեն», ասել է նա՝ իհարկե ավելացնելով, որ Ղարաբաղը վերջնականապես չկորցնելու միակ տարբերակն իշխանությունների եւ հատկապես նախագահ Ս. Սարգսյանի անհապաղ հեռացումն է: Ինչպես տեսնում եք՝ ոչ մի նոր բան:**

## ՀԴՄ կտրոնների բոնուսները ստանալիս

### *Ինչ տեսանք եւ ինչը պետք է կարգավորել*

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

Հուլիս ամսից սկսած տարածքային հարկային ստորաբաժանումներում, ինչպես եւ խոստացել էր «Հրանտ ձյաձյան», սկսեցին վճարել նախորդ երեք ամիսների՝ ապրիլի, մայիսի, հունիսի ընթացքում ՀԴՄ կտրոնների համար սահմանված բոնուսները (պարգեւավճար): Հիշեցնենք, որ մինչեւ սեպտեմբեր ամսվա վերջը, բոլոր նրանք, ովքեր դեռ չեն դիմել վերոնշյալ պարգեւավճարները ստանալու համար, կարող են դա անել: Իսկ թե ինչպես է ընթանում այդ գործընթացը, առիթ ունեցանք սեփական փորձով մասնակից եւ ականատես լինելու:

Հուլիս ամսին գործնականում անհնար էր ՀԴՄ-ների կտրոնների բոնուսները ստանալը: Մեր այցելած Երեւանի մի քանի տարածքային ստորաբաժանումներում ահավոր հերթեր էին: Որոշ տեղերում քաղաքացիները հերթի ցուցակներ էին կազմում, ինչպես խորհրդային վերջին տարիներին կարագի եւ ՀՀՇ-ական իշխանության տարիներին հացի հերթերի ժամանակ: Սակայն, ի տարբերություն անցյալի, երբ այդ ցուցակների արժեքը կորում էր տվյալ ապրանքը ստանալուն պես, եւ մարդիկ գրոհում էին խանութի դռներն ու փեղկերը, ՀԴՄ-ների կտրոնների հերթի ցուցակները կարծես թե գործում էին: Այդուհանդերձ, առանց նվազագույնը մեկ ամբողջ օր կորցնելու հնարավոր չէր լինում ստանալ բաղձալի միջնորդագիրը, որի հիման վրա բանկերից կարելի էր ստանալ պարգեւավճարը: Ինչպես հայտնեցին հարկային ստորաբաժանումների աշխատակիցները, հուլիսի ընթացքում օրական 100-200 այցելուի էին սպասարկել:

Օգոստոսին հերթերը նվազել էին: Սակայն, օրինակ, հարկայինի Սպանդարյան ստորաբաժանումում մեր այցելած օրը հերթագրվել էր 52 մարդ: Փորձեցինք բոնուսի միջնորդագիրը ստանալ մեկ այլ՝ Մալաթիա-Սեբաստիայի տարածքային ստորաբաժանումից: Հավանաբար ամպամած եղանակն էր պատճառը, որ այդ օրն ընդամենը մի քանի հոգի էին իրենց կտրոնները ներկայացրել: Դրանց քանակը եւ գումարի չափը հարկային ծառայության աշխատակիցները հաշվում էին առանց հաշվարկող տեխնիկական միջոցների, ինչի մասին պետեկամուտների կոմիտեի ղեկավարները խոստացել էին, որ հուլիս ամսին կլինի, բայց չկային: Այսինքն, հաշվարկը երկար էր տեւում, ինչն էլ հերթերի հիմնական պատճառն էր: Սակայն, բացի հերթերից, առաջանում էին խնդիրներ, որոնք կարող էին չլինել, եթե նախապես իրազեկեին գործընթացի բոլոր մանրամասները:

*Տես էջ 3*

# Ավելացել է աշխատանք փնտրողների թիվը

Աշխատանք փնտրողները շատ են, աշխատատուները՝ քիչ: Աշխատանքի տեղավորման գործակալություններում դիմողներին գրանցում են, բայց խոստումներ դժվարանում են տալ: Երբեմն նաեւ հրաժարվում են գրանցել, հատկապես երբ դրսում արձակուրդային շրջան է:

Աշխատանքի տեղավորման «Ասպետ» գործակալությունում աշխատանք փնտրողների հոսքը մեծ էր տարեսկզբին, վերջին երեք ամիսներին որոշակի կրճատում է նկատվում, պատճառը, նրանց կարծիքով, աշխատատեղերի նվազումն է: «Բացի այդ, զգալիորեն կրճատվել է աշխատատուների թիվը, ցածր են նաեւ աշխատավարձերը: Եթե տարեսկզբին գործավարի աշխատանք փնտրողին առաջարկում էինք 5 տարբերակ՝ 120.000 դրամ աշխատավարձով, այսօր միայն մեկ տարբերակ կարող ենք առաջարկել՝ նախկին աշխատավարձի ուղիղ կեսով», ասաց գործակալության աշխատակից **Իրեն Նազարյանը**: Նա նկատում է, որ այսօր աշխատատուներն առավելապես փնտրում են հաշվապահների, գրասենյակային եւ անվտանգության աշխատողների:

«Ակսեպտ» կադրային կենտրոնն առաջարկում է հիմնականում գրասենյակային աշխատանքներ: 5 տարվա ընթացքում նրանց մոտ գրանցվել է շուրջ 2500 մարդ, ովքեր փորձում էին գտնել գրասենյակային, բարձր վարձատրվող աշխատանք: «Մեր գործակալությունում գրանցվում են մարդիկ, ովքեր աշխատում են ներկա պահին, սակայն ավելի լավ աշխատանք են փնտրում: Այս պահին, սակայն աշխատատուների թիվը էականորեն նվազել է», ասաց գործակալության վարչական աշխատակից **Կարինե Մանուկյանը**:

«Մերու» կադրային կենտրոնի ղեկավարը պատմում է, որ իրենց են դիմում տարբեր աշխատանք գտնելու ակնկալիքով՝ գործավարից մինչեւ շինարար: Ասում է, որ տարեսկզբին շատ էին թե՛ աշխատանք փնտրողները եւ թե՛ աշխատատուները: «Հայտերը շատ էին եւ հաճախ մենք ընտրում էինք, թե որ հայտով զբաղվենք, որով՝ ոչ: Այժմ նվազել է ոչ միայն աշխատատուների, այլեւ փնտրողների թիվը: Սակայն կարծում եմ, որ սեպտեմբերից որոշակի աշխուժություն կրկին կնկատվի», ասաց կենտրոնի ղեկավար **Մայա Օգանեզովան**:

«Արեգ» տեղեկատվական կենտրոնը տարվա կտրվածքով ստանում է շուրջ 2 մլն հարցում, ինչն էլ թույլ է տալիս կատարել վերլուծություններ եւ մոնիտորինգ կատարել: Ուսումնասիրել են նաեւ աշխատանքի շուկան եւ եզրակացրել, որ քիչ են նաեւ բարձր որակավորում ունեցող մասնագետները: «Մարդկանց մեծ մասն այսօր թեթեւ աշխատանք է փնտրում: Երիտասարդներից շատերը սովորաբար թեթեւ գրասենյակային աշխատանք են փնտրում: Մինչդեռ 40-50 տարեկան կանայք համաձայնում են ամեն աշխատանքի իրենց երիտասարդ զավակների ընտանիքը պահելու համար», ասաց կենտրոնի տնօրեն **Հայկ Պապյանը**: Աշխատանք փնտրողներից շատերը, Հայկ Պապյանի դիտարկմամբ, հրաժարվում են նաեւ գործարքային աշխատանքից: «Իրականում, եթե գիտակ ես, կարող ես գործարքային աշխատանքի միջոցով ամսական մինչեւ 300.000 դրամ վաստակել: Մարդիկ, սակայն, նախընտրում են 40.000-60.000 դրամ աշխատավարձով աշխատանքը», նկատում է նա:

Վիճակագրության համաձայն՝ 2009 թվականի հունվար-հունիս ամիսներին պաշտոնապես գրանցված է 79.1 հազար գործազուրկ՝ տնտեսապես ակտիվ բնակչության 6.7 տոկոսը: 2008 թվականին այդ թիվը կազմում էր 74.6 հազար էր: Վիճակագրական ծառայությունը, սակայն, 2008 թվականի հուլիս ամսին իրականացրել է ընտրանքային հետազոտություն՝ բացահայտելով աշխատաշուկայի իրական պատկերը: Վերլուծությունները կատարվել են 2000 տնային տնտեսությունների 15-75 տարեկան անդամների պատասխաններով: Այդ հետազոտության համաձայն, գործազուրկների թիվը 304.9 հազար է՝ տնտեսապես ակտիվ բնակչության 23.2 տոկոսը:

ԱՐԵՎԻԿ ԲԱԴԱԼՅԱՆ

# Ինչո՞ւ են շատացել ճանապարհային վթարները



Այս տարվա օգոստոսի 1-18-ը հանրապետությունում գրանցվել է ճանապարհատրանսպորտային 97 պատահար, որոնց ընթացքում 14 քաղաքացի զոհվել է, իսկ 142-ը ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ եւ տեղափոխվել հիվանդանոց: Նույն ժամանակահատվածում Երեւանում տեղի է ունեցել 40 ճանապարհատրանսպորտային պատահար, 4 քաղաքացի զոհվել է, 63-ը ստացել է մարմնական տարբեր աստիճանի վնասվածքներ:

Հաճախ հարց ենք տալիս, թե ինչո՞ւ են շատացել կամ գնալով աճում են վթարների, վրաերթերի պատահարները, ու մարդկային կյանքեր խլում: Այդ ամենի պատասխանն ու հիմնական պատճառները մի քանիսն են՝ արագության գերազանցում, ամրագոտիներից չօգտվելու, երթեւեկության կանոններին չենթարկվելու եւ խստագույնս չպահպանելու վատ սովորույթ, ոգելից խմիչք օգտագործած մեքենա վարել, հեռահար լույսերը դիմացի մեքենայի վարորդի կամ հետիոտնի վրա գցել, հետիոտնին ճանապարհ չզիջել, արգելված վայրերում՝ հատկապես մայթերի վրա կայանել եւ էլի շատ ու շատ վատ սովորույթներ, որ չարիք են դառնում թե՛ հետիոտների, թե՛ վարորդների համար:

«**Ազգը**» կփորձի առաջիկա որոշ պարզաբանումներ անել, թե որքան են տեղեկացված վարորդները եւ հետիոտները, որ երկուստեք, ամեն քայլափոխի կոպտորեն խախտում են երթեւեկության կանոնները, անգամ դժբախտ պատահարների զոհեր դառնում:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

# Վեդի քաղաքում բացվեց մանկական պոլիկլինիկա

Օրերս Արարատի մարզի Վեդի քաղաքում Ամերիկայի Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆՄԶԳ) հայաստանյան առաքելության սոցիալական բարեփոխումների գրասենյակի տնօրեն **Սանգիտա Փաթելը** եւ Վեդու քաղաքապետ **Ալբերտ Սարոյանը** պաշտոնապես վերաբացեցին Վեդու բժշկական կենտրոնի մանկական պոլիկլինիկան:

Վերանորոգումն իրականացվել է ԱՄՆ ՄԶԳ եւ ՆՕՎԱ ծրագրի 75 տոկոսով եւ Վեդու բժշկական կենտրոնի 25 տոկոս ներդրումների շնորհիվ: Ծրագրի շրջանակում պոլիկլինիկայի բուժանձնակազմը՝ մանկաբույժներ, ընտանեկան բժիշկներ, մասնակցել է մանկան խնամքի ոլորտի մի շարք դասընթացների: 2006-ից ՆՕՎԱ ծրագիրը աշխատում է Վեդու շրջանում, որի ընթացքում ստեղծվել է մայրության դպրոցը, վերանորոգվել է 10 գյուղական բուժկետ, տրամադրվել են նոր եւ մանկան խնամքի համար անհրաժեշտ հիմնական սարքավորում եւ բուժպարագաներ: Ծրագիրն աշխատում է Հայաստանի 5 հարավային մարզերում եւ իրականացվում է մի շարք միջազգային կազմակերպությունների կողմից, որոնք սերտորեն համագործակցում են ՀՀ առողջապահության նախարարության, Երեւանի պետական բժշկական համալսարանի, Առողջապահության ազգային ինստիտուտի եւ բուժհաստատությունների հետ:

Վերաբացված մանկական պոլիկլինիկան, որը հագեցած է կարեւոր բուժսարքավորումներով, մեծ նշանակություն կունենա մարզում եւ հատկապես Վեդի քաղաքի մոր եւ մանկան առողջության պահպանման ու գիտելիքների զարգացման գործում:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ

# Ումի՞ց ի՞նչ էիք թաքցնում

*1-ին էջից*

Միգուցե կա՞ն էլի նման էպիզոդներ, որոնցից մենք տեղյակ չենք, եւ կարող են մեզ քննադատել, որ ասեն՝ այ էս մեկը դուք թաքցրել եք կամ աչքաթող եք արել: Եթե լինեն նման էպիզոդներ եւ վկայություններ կամ տեսանյութեր, հանձնաժողովը դրանց ընթացք կտա, իսկ զեկույցից հետո բերեն այդպիսիք՝ դա արդեն մեկ այլ ձեւով կարելի է մեկնաբանել: Որովհետեւ եթե մի տարուց ավելի հանձնաժողովն ամեն օր դիմում է-խնդրում-պահանջում, որ տվյալներ, փաստեր, իրեղեն ապացույցներ ունեցողները դրանք հանձնեն հանձնաժողովին: Եթե մինչեւ հիմա լռում են ու դրանից հետո հրապարակեն, դա անհասկանալի կլինի, կամ՝ ավելի շուտ հասկանալի կլինի, թե ինչո՞ւ են հանձնաժողովի զեկույցից հետո հրապարակում:

**- Իսկ Ձեզ համար անսպասելի՞ էր նման կադրերի գոյությունը, ավելի ճիշտ՝ որ նման գործողություններ են տեղի ունեցել:**

- Չէ, այնպես չէ, որ զարմացա, կամ հավատս չէր գալիս. այդպես չէ, խնդիրն այն է, որ նման իրավիճակներում, որտեղ պետք է գնահատես ոստիկանների եւ ցուցարարների գործողությունները, նման իրավիճակներում պետք է հստակ ասել, որ ոստիկանությունն իրավունք ունի գործադրելու իրավախախտի նկատմամբ ուժ, հատուկ միջոցներ եւ օրենքով սահմանված դեպքերում եւ կարգով՝ ընդհուպ հրազեն, բայց ոստիկանությունը պետք է հասկանա հետեւյալը. որ իր յուրաքանչյուր գործողություն պետք է տեղավորվի օրենքի մեջ: Եթե ինքը հանցագործի նկատմամբ գործողություններ իրականացնելիս գործադրում է ապօրինի միջոցներ, ապա ոստիկանի ու հանցագործի միջեւ տարբերությունը գրեթե վերանում է:

**- Քննչական վարչությունն ինչո՞ւ չուներ նմանատիպ կադրերը:**

- Ես չգիտեմ՝ ինչո՞ւ չունի: Եթե ունենար, ապա մեզանից չէր վերցնի: Ընդհանուր առմամբ, իմ կարծիքով, տեսանյութերի պակաս կա, եւ ամենամեծ քննադատությունը, որը հանձնաժողովը պատրաստվում է ուղղել պետական համապատասխան մարմիններին, թերեւս դա է. ումի՞ց ինչ էիք թաքցնում դուք: Եթե չեք նկարահանել ամեն ինչն ու ամբողջությամբ՝ ինչի՞ համար չեք նկարահանել: Չէ՞ որ եթե լինեին նկարահանումները, ամեն ինչը շատ ավել արագ որոշակիության կբերվեր: Եվ հանձնաժողովի զեկույցը կամ իրավապահ մարմինների գործողությունները շատ ավելի փաստարկված կլինեին: Ոստիկանները պարտավոր էին իմանալ, որ եթե իրենք այս կամ այն գործողությունն են անում՝ պետք է շահագրգիռ լինեն, նկարեն ու ցույց տան՝ էմոցիոնալ հարթության մեջ կամ սխալ չգնահատելու համար նրանց գործողությունները: Կա օրենք, եւ իրենք կարող են ասել, որ այսինչ կետով իրականացրել են իրենց գործողությունները:

**- Ի՞նչ նոր պահեր պետք է պարունակի զեկույցը, որոնց ծանոթ չենք, դուք դատախազություն չեք, բայց այնպիսի փաստեր ունե՞ք, որ դատախազությունը, հատուկ քննչական մարմինն, այնուամենայնիվ, չեն բացահայտել:**

- Դուք ճիշտ եք, մենք դատախազություն չենք, նախաքննական մարմին, ոստիկանություն, դատարան չենք. հանձնաժողովն ավելի շուտ ստեղծված է պետական մարմինների գործողություններին գնահատական տալու համար, եւ լուսնից իջած նորություններ մենք չունենք ասելու, այլ կատարված իրադարձությունների, ոստիկանության, իրավապահ մարմինների իրավաչափության եւ համաչափության գնահատականը պետք է տանք՝ կոնկրետ դեպքերով, դրվագներով եւ իրավիճակներով:

**- Կա՞ն անիրավաչափության գնահատականներ:**

- Գոնե այս պահի դրությամբ մեր տեսակետն այնպես է, որ նրանք տվյալ լոկալ իրավիճակներում գործել են ոչ համաչափ. այլ կերպ չի կարելի բնութագրել այն պահը, երբ 4 ոստիկան ծեծում են մեկ մարդու, որը չի դիմադրում: Դա նման է այն դրվագին, երբ 30 ցուցարարով էին ոստիկանին ծեծում, նրա զենքը խլում էին, էլի անհասկանալի էր, չէ՞: Եթե այս դեպքում կա պատասխանատվության ենթարկված (ոչ բոլորն են, իհարկե, պատասխանատվության ենթարկվել), ապա այս դեպքում եւս ով օրենք է խախտել՝ եւս պետք է պատասխանատվության ենթարկվի:

**- Թե ո՞վ է հրաման տվել՝ հատուկ միջոցներով մարդկանց վրա կրակելու, գոնե դուք դրա պատասխանն ունե՞ք, այդքան որ մամուլում շահարկվում է:**

- Հանձնաժողովի նիստերին կոնկրետ պաշտոնյաներ կոնկրետ պահերի վերաբերյալ ասել են, որ հրամանը տվել են իրենք եւ գործել են օրենքի շրջանակում. ճիշտն ասած՝ ինձ համար անհասկանալի է, որ 1-1,5 տարի խոսվում է հրաման տվողի մասին. բոլորը կոնկրետ իրավիճակների համար պատասխանել են, թե իրենք ինչո՞վ են առաջնորդվել եւ ո՞վ է հրաման տվել: Ավելին ասեմ՝ կոնկրետ հատուկ միջոցների կիրառման դեպքերի վերաբերյալ շատ ավելի հստակ ասվում է՝ ով է հրամանը տվել, ով է կիրառել. այդ կտրվածքով որեւէ խնդիր չկա:

**-Նորից հարցնեմ՝ ձեր զեկույցի արդյունքում հնարավո՞ր է, որ հատուկ քննչական մարմնի, պետական այլ օղակների պատասխանատվության հարց առաջանա, այնքան որ բացահայտումներ լինեն:**

- Հանձնաժողովն իր զեկույցը ներկայացնում է Ազգային ժողովին: Ազգային ժողովը կամ պետական այլ մարմիններ ինչպես կօգտագործեն դա, արդեն իրենց խնդիրն է:

**- Այսինքն՝ կան այդպիսի պահեր, որ կարող են պատասխանատվության խնդիր առաջացնել:**

- Դա հանձնաժողովի իրավասություններից դուրս է, հնարավոր է եւ որ լինեն:

**- Իսկ որ բաց մնաց նախկին նախագահներ Քոչարյանին եւ Տեր-Պետրոսյանին հանձնաժողովում լսելու խնդիրը, այդ բացը չի՞ խանգարելու ձեզ:**

- Ոչ, դա ինձ չի խանգարելու, ավելի շատ իրենց է խանգարելու, իրենց քաղաքացիական պարտքն էր հասարակության հանդեպ, այն հասարակության, որին երկուսն էլ բազմաթիվ տարիներ ղեկավարել էին եւ օրինականության կոչ էին անում, փորձում պետական մարմինների նկատմամբ հարգանք ներշնչել: Չգալը եւս պատասխան է, իրենք դրանով պատասխանել են:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

AZG NEW 3.QXD 8/18/2009 9:29 PM Page 1



ԱԶԳ

## Անցուդարձ

# Վրաստանի արդարադատությունը «շտկում է բանտի բացթողումնե՞րը»

### *Ստեփան Ոսկանյանին թույլ չեն տվել տեսակցել Չախալյանի հետ*

2009-ի օգոստոսի 17-ին ջավախահայ քաղաքական ակտիվիստ Վահագն Չախալյանի հայ փաստաբան **Ստեփան Ոսկանյանը** փորձել է այցելել իր պաշտպանյալին, որ պահվում է Վրաստանի Ռուսթավի քաղաքի թիվ 5 գաղութում: Սակայն գաղութի ղեկավարությունը հրաժարվել է թույլ տալ տեսակցությունը, պատճառաբանելով, որ փաստաթղթերը, որով հայ փաստաբանը նախկինում իրավունք ուներ հանդիպելու Վահագն Չախալյանի հետ, արդեն անվավեր են:

Ինչպես տեղեկացնում է «Երկիր» հայրենադարձության եւ հիմնավորման հասարակական կազմակերպությունների միությունը, նույն օրը Ստեփան Ոսկանյանը դիմել է Վրաստանի հանրային պաշտպանի գրասենյակ, որի աշխատակիցները, ուսումնասիրելով փաստաբանի փաստաթղթերը, գաղութի ղեկավարության որոշումը գնահատել են որպես ամբողջովին անհիմն:

Իր պաշտպանյալի հետ տեսակցությունը թույլ չտալու փաստի առնչությամբ Ստեփան Ոսկանյանը նաեւ գրավոր բողոք է ներկայացրել Վրաստանի հանրային պաշտպանին եւ Ռուսթավիի գաղութի ղեկավարությանը:

«Երկիր» միությունը Վահագն Չախալյանի հետ փաստաբանի տեսակցությունն արգելելու որոշումը գնահատում է որպես վրացական իշխանությունների կողմից ջավախահայ քաղաքական ակտիվիստի տարրական իրավունքների հերթական խայտառակ խախտում, որի նպատակն է խոչընդոտել Չախալյանի գործով ս.թ. սեպտեմբերի 18-ին կայանալիք դատալսմանը լիարժեք նախապատրաստվելուն: «Վրացական իշխանությունները նշված քայլով նաեւ նպատակ են հետապնդում էապես դժվարացնել Վահագն Չախալյանի` հայկական ԶԼՄ-ներից տեղեկատվություն ստանալու հնարավորությունը, որ ապահովում էր հայ փաստաբանը», նշվում է միության հայտարարության մեջ:

Հաշվի առնելով վերոնշյալը` «Երկիր» միությունը կոչ է արել Վրաստանի հանրային պաշտպան Սոզար Սուբարիին, միջազգային իրավապաշտպան կազմակերպություններին, Վրաստանում հավատարմագրված միջազգային կառույցներին եւ դիվանագիտական ներկայացուցչություններին` համապատասխան գնահատական տալ վրացական իշխանությունների հերթական խայտառակ խախտմանը, ինչպես նաեւ վերացնել դրա հետեւանքները` ապահովելով հետագայում փաստաբանի անարգել մուտքը իր պաշտպանյալի մոտ:

Չախալյանի եւ նրա ընտանիքի անդամների դեմ դատական գործն իր առանձնահատուկ ոդիսականն ունի: Հիշեցնենք, որ հուլիսի 22-ին Թբիլիսիում տեղի ունեցած Չախալյանների գործի վերաքննիչ բողոքի դատական նիստը ոդիսականի ընդհանուր տրամաբանությունից դուրս չէր, որը մարդու իրավունքների պաշտպանության հետ աղերսներ չունի:

«Միասնական Ջավախք» ժողովրդական դաշինքի առաջնորդ Վահագն Չախալյանի դատավարությունը յուրօրինակ ապացույց էր լեզվի չիմացության պայմաններում սեփական իրավունքների պաշտպանության դժվարության: Միեւնույն ժամանակ, վրացական արդարադատությունն էլ արդեն որերորդ անգամ թարգմանությունների առումով այնպիսի վիճակ էր ստեղծել, որ ո՛չ Չախալյանի խոսքերն են հասնում դատավորին, ո՛չ էլ նրանը` մեղադրյալին:

Հուլիսի 22-ին Թբիլիսիում քրեական գործերով վերաքննիչ դատարանը սկսեց Վահագն Չախալյանի եւ նրա հոր ու եղբոր գործի վերաքննիչ բողոքի քննությունն ու առանձնակի առաջընթաց չգրանցելով` հետաձգեց մինչեւ սեպտեմբերի 18-ը:

Նշենք, որ պաշտպանական կողմը ժամանակ խնդրեց այլընտրանքային փորձաքննություն անցկացնելու համար, որին անհրաժեշտ էր 20 օր: Դատարանն էլ, հաշվի առնելով արձակուրդային վիճակները կամ մնալով Չախալյանների գործում հետաձգումների անպակասության տիրույթում, հետաձգեց դատական նիստը` շարունակության համար ընտրելով սեպտեմբերի 18-ը:

Ու մինչ կգա սեպտեմբերի 18-ը, Չախալյանին չեն թույլատրում տեսակցել իր երեք փաստաբաններից այն մեկի հետ, որի հետ շփումը բանտարկյալի համար լեզվական խնդիրներ չի առաջացնում: Ստեփան Ոսկանյանին արդեն բանտում Չախալյանին տեսակցելու հնարավորություն չընձեռելու հանգամանքը թերեւս պայմանավորված է հուլիսի 22-ի դատական նիստում Ոսկանյանի փաստաբանական փաստաթղթերում վրացի երեք դատավորների խճճվելով, երբ Ստեփան Ոսկանյանը բարձրաձայնեց, թե ինչպե՞ս է Չախալյանի պաշտպանը լինելու իր նույն փաստաթղթերն ընդունելի բանտում, բայց ոչ դատարանում:

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի եւ ՀԲԸՄ հայորդաց տների այցը Ջավախք

**Օգոստոսի 4-6-ը Ջավախք էին այցելել Մայր աթոռ Սբ Էջմիածնի եւ Հայկական բարեգործական ընդհանուր միության Նորքի եւ Արաբկիրի հայորդաց տների սաները` առաջնորդությամբ հոգեւոր տեսուչ-տնօրեն Կոմիտաս վրդ. Հովնանյանի: Խմբի ղեկավարության կազմում էին նաեւ հայորդաց տների ուսումնական գծով փոխտնօրեն տիկին Աիդա Անդրեասյանը, Արաբկիրի հայորդաց տան տնօրեն Էդգար Հովհաննիսյանը եւ մի շարք մանկավարժներ:**

**Ախալքալաքի Սբ Խաչ եկեղեցու բակում իրենց հասակակիցներին դիմավորեցին առաջնորդական փոխանորդությանը կից գործող բակային ճամբարի սաները: Հայաստանից ժամանած հյուրերին բարի գալուստի խոսք հղեց Սամցխե-Ջավախքի ընդհանուր առաջնորդական փոխանորդ Բաբկեն աբղ. Սալբիյանը: Նա իր խոսքում կարեւորեց նմանատիպ այցերի շարունակականությունը` նշելով, որ Հայաստանից ժամանած հայորդիների ներկայությունը ոգեւորիչ եւ խրախուսական է ինչպես ջավախահայ իրենց հասակակիցների, այնպես էլ ողջ ջավախահայության համար: Այնուհետեւ ներկաները Սբ Խաչ եկեղեցու կամարների ներքո ընդհանրական աղոթք վերառաքեցին առ Աստված, որից հետո հոգեւոր զորակցության խոսքեր ուղղեց ներկաներին հայորդաց տների հոգեւոր տեսուչ-տնօրեն Կոմիտաս վրդ. Հովնանյանը:**

**Արարողության ավարտին ներկաները եկեղեցու բակում միասնական կազմով երգեր երգեցին: Երեկոյան հայորդաց տան սաները հյուրընկալվեցին Արագովա գյուղում եւ համերգային շուրջ 1,5 ժամանոց ծրագրով հանդես եկան գյուղի բնակիչների առջեւ: Հաջորդ օրը` վաղ առավոտյան, հյուրերը Արագովայի Սբ Գեւորգ եկեղեցու հոգեւոր հովիվ Թադեոս քհն. Տեր-Մկրտչյանի ուղեկցությամբ այցելեցին Վարձիա, որից հետո մասնակցեցին մատաղի արարողությանը: Վերադարձի ճանապարհին հայորդաց տան սաները տեսան Թմկաբերդի եւ Խերթվիսի բերդերը: Երեկոյան ժամը 6-ին Ախալքալաքի քաղաքային այգում հայորդաց տան սաների հրաշալի ելույթին ականատես դարձան բազմաթիվ ախալքալաքցիներ եւ շրջակա գյուղերի բնակիչներ:**

**Հաջորդ օրը հայորդաց տների ավտոբուսը Ախալքալաքի հոգեւոր հովիվ Սամվել քահանա Թորոսյանի եւ Թադեոս քհն. Տեր-Մկրտչյանի ուղեկցությամբ կանգ առավ Դիլիսկա գյուղում: Կեսօրին գյուղի եկեղեցու բակում հյուրերի մասնակցությամբ տեղի ունեցավ համերգ, որին ներկա էր գյուղի գրեթե ողջ բնակչությունը: Համերգի ավարտին հայորդաց տան սաներին ողջույնի եւ երախտագիտության խոսքեր հղեցին գյուղապետ Անաստաս Քոսյանը եւ դպրոցի տնօրեն Ռիմա Մկոյանը: Վերջում գյուղի ղեկավարությունը դպրոցի շենքում հյուրասիրություն կազմակերպեց հայորդաց տան սաների համար: Նույն օրը երեկոյան Ախալքալաքի քաղաքային այգում բարի երթի խոսքով հյուրերին հրաժեշտ տվեց Բաբկեն աբղ. Սալբիյանը: Հայորդաց տան սաները մեծ եռանդով եւ խանդավառությամբ վերադարձան Հայաստան` ջավախահայ իրենց հասակակիցների հետ արդեն Հայաստանում հանդիպման ակնկալիքով:**




*Սամցխե-Ջավախքի ընդհանուր առաջնորդական փոխանորդության մամլո դիվան Ախալքալաք*

## ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՇՈՒԿԱ

# Ոչ պարենային ապրանքների մոտ 80 տոկոսը հայերեն մակնշում չունի

**«Սպառողների իրավունքների պաշտպանություն» հասարակական կազմակերպությունը մշակել եւ ՀՀ կառավարությանն է ներկայացնելու «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի մի նախագիծ, համաձայն որի Հայաստան ներմուծվող ոչ պարենային ապրանքները 2010-ի հուլիսի 1-ից պետք է պարտադիր մակնշվեն հայերեն լեզվով:**

**«Սպառողների իրավունքների պաշտպանություն» հասարակական կազմակերպությունը դիտարկումներ է իրականացրել կենցաղային քիմիայի, լվացող, մաքրող միջոցների, օծանելիքների, կենցաղային նշանակության բարդ տեխնիկական եւ այլ ապրանքների շուկաներում եւ եկել եզրահանգման, որ ներկրված ոչ պարենային ապրանքների մոտ 80 տոկոսը հայերեն մակնշում չունի:**

**Երեկ «Փաստարկ» ակումբում լրագրողների հետ հանդիպման ժամանակ ՀԿ-ի նախագահ Աբգար Եղոյանը տեղեկացրեց, որ կազմակերպվելու է քարոզարշավ, որի նպատակն է ներկրողներին իրազեկել, որ «որոշ ժամանակ անց ավելի կոշտ միջոցներ են կիրառվելու»:**

**«Սպառողների իրավունքների պաշտպանություն»-ը կառավարությանը նաեւ առաջարկում է վերանայել սերտիֆիկացման համակարգը: Ըստ Ա. Եղոյանի, բոլոր ապրանքները պետք է սերտիֆիկացված լինեն:**

**«Կան ապրանքների որոշակի տեսակներ, որոնց ծառայության ժամկետի ավարտից հետո օգտագործումը կարող է վնաս հասցնել սպառողների կյանքին, գույքին եւ շրջակա միջավայրին: Դրանց ցանկը հաստատում է ՀՀ կառավարությունը, եւ անպայման պետք է ապրանքի մակնշման վրա կամ նրա հետ տրամադրվող տեղեկատվության մեջ այն գրված լինի: Այսօր մենք դա նույնպես չունենք», փաստեց Ա. Եղոյանը:**

**Անցած տարվա օգոստոսին կառավարությունը պարտադիր սերտիֆիկացված ապրանքների ցանկի թիվը կրճատել է` հակաճգնաժամային նկատառումներով, բայց, Ա. Եղոյանի խոսքով, ստացվում է, որ ավելի կրճատվել է սերտիֆիկատների շրջանառությունը:**



**Ա. Եղոյանը նաեւ նշեց, որ ներքին արտադրողների հետ խնդիր չկա, եւ տեղական արտադրողները ապրանքները մակնշում են հայերեն լեզվով:**

**Եղոյանը նկատում է, որ փողոցային առեւտուրը դեռեւս գոյություն ունի, իսկ փողոցային առեւտրից պետական բյուջե գումար չի մտնում:**

**«Իսկ թե ում են վճարում փողոցային առեւտրով զբաղվողները, կարծում եմ դժվար չէ հասկանալ», հավելեց նա:**

**Այնուամենայնիվ նա նշեց, որ նախկին տարիների համեմատ առաջընթաց կա, առաջին հերթին սպառողների գիտակցության բարձրացման առումով:**

Ն. ՄՈՒՐԱԴՅԱՆ

# ՀԴՄ կտրոնների բոնուսները ստանալիս

*1-ին էջից*

Մասնավորապես, քաղաքացիների գերակշիռ մասը, եթե չասենք` գրեթե բոլորը, տեղյակ չէին, որ ՀԴՄ-ների կտրոնների հակառակ երեսին պետք է ստորագրեին: Այնուհետեւ, հաշվարկից հետո պարզվում էր, որ բացի անձնագրից, քաղաքացիները պետք է դրա պատճենը տրամադրեն հարկայինին: Մարդիկ նախ ժամանակ էին կորցնում իրենց ստորագրությունները կտրոնների վրա դրոշմելու, ապա շրջակայքում պատճենահանման կետեր գտնելու համար: Մինչդեռ այս խնդիրները չէին լինի, եթե պետեկամուտների կոմիտեն նախապես իրազեկեր, որ միջնորդագիր ստանալու համար, ներկայացված ՀԴՄ-ների կտրոնների հակառակ երեսին քաղաքացիները պետք է ստորագրեն եւ ներկայանան անձնագրով ու անձնագրի պատճեններով:

Միջնորդագիր ստանալուց հետո նմանատիպ խնդիրներ ծագում են նաեւ բանկերում, որտեղ հասնելուց հետո պարզվում էր, որ հարկ է ներկայացնել միջնորդագրի պատճենի 2 օրինակ եւ անձնագրի պատճենի 3 օրինակ: Դարձյալ ժամանակի կորուստ, դարձյալ մոտակայքում պատճենահանման կետի որոնում: Այնինչ դարձյալ դժվար չէր լինի նույն հարկային ստորաբաժանումներում գրել եւ փակցնել պատին, թե միջնորդագրից բացի ինչ է անհրաժեշտ բոնուսը ստանալու համար բանկ ներկայանալիս:

Սրանք սուբյեկտիվ խնդիրներն էին, որոնց լուծումը թերեւս մեծ դժվարություն չի ներկայացնում, եւ հուսով ենք, որ առաջիկայում դրանց պատճառով մարդիկ նյարդեր չեն քայքայի ու ժամանակ չեն կորցնի պետության կողմից իրենց պարտաճանաչության դիմաց խոստացված պարգեւավճարը ստանալիս: Սակայն հիմնական դժգոհությունն այլ էր` գրեթե բոլորի մոտ մեծ թիվ էին կազմում բոնուսի գումարի չափին չհասնող կտրոնների քանակները: Խոսքը փոքր գնումներով կտրոնների մասին է, որոնք հիմնականում սոցիալապես առավել անապահով մարդկանց մոտ էին լինում: Թերեւս այստեղ կտրոնների քանակ եւ արժեք հարաբերակցության որոշ փոփոխությունների անհրաժեշտություն կա:

Ճիշտ կլիներ, եթե 50 կտրոնի համար 100 հազար դրամի դեպքում սահմանված նվազագույն` 2500 դրամ բոնուսից բացի, սահմանվեր նույն` 50 կտրոնի համար 50 հազար դրամ կամ 75 հազար դրամ գումար, ենթադրենք` 1500 դրամ կամ 2000 դրամ բոնուսով: Պետք է նկատի առնել, որ հենց սոցիալապես անապահովներն են փոքր գնումներ կատարում ու ավելի շահագրգիռ են կտրոններ պահանջելու եւ հավաքելու հարցում: Եթե նրանք չխրախուսվեն, փոքր գնումների համար կտրոն պահանջելու ցանկությունը կվերանա` նպաստելով ստվերի խորացմանը, քանի որ հենց փոքր գնումներն են առավել մեծ ծավալ կազմում:

Ինչ մնում է սպառողներին, ապա ելնելով արդեն առկա փորձից, կցանկանայինք նրանց հետեւյալ խորհուրդները տալ: Առաջին, հնարավորության դեպքում գնումներ կատարել նախ եւ առաջ այն առեւտրի եւ սպասարկման օբյեկտներից, որտեղ առանց ավելորդ գլխացավանքի տրամադրում են ՀԴՄ կտրոնները: Երկրորդ, ավելի քիչ քանակով եւ ավելի մեծ արժեքով կտրոններ ունենալու համար գնումներ կատարել երկու-երեք օրը մեկ կամ հնարավորության դեպքում ավելի մեծ ժամկետների համար: Եվ վերջապես, ամենակարեւորը, չդադարեն պահանջել կտրոնները եւ օրինականորեն իրենց հասանելիք բոնուսը չթողնեն ուրիշներին որպես ստվերային շահույթ:

AZG NEW 4.QXD 8/18/2009 9:29 PM Page 1



# «Թուրքական պատերազմական ատյանը նախադեպն էր Նյուրնբերգի»

*1-ին էջից*

**- Այս դատական գործընթացը փաստորեն սկսվեց 1918-ին:**

- Այո, 1918-ի դեկտեմբերին սկսվեց: Դեկտեմբերի 14-ին սուլթանը հրովարտակ արձակեց, որով դատական հետաքննություններ սկսվեցին Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ հայկական ջարդերի պատասխանատուների նկատմամբ: Այս հրովարտակի հիման վրա կազմվեց պատերազմական ատյանը, որի փաստերով ստեղծվեց մարտի ութի լայնածավալ ամբաստանագիրը: Այստեղ կցանկանամ նշել, որ ի տարբերություն անգլիական-ամերիկյան դատական համակարգի, թուրքական դատական համակարգը հիմնված էր ֆրանսիական սիստեմի վրա, ուր ամբաստանյալը իրավունք չունի հետազոտելու դատարանի ձեռքին գտնվող փաստերը: Ֆրանսիական եւ թուրքական սիստեմի մեջ փաստաբանները չկարողացան մոտենալ հավաքված փաստերին, եւ ամբաստանագիրը լի է, մի գեղեցիկ հայերեն բառ ունենք՝ կլանիչ փաստե:րով:

**- Փաստորեն այդ մեղադրական փաստերը բաց արխիվներում էին, եւ դուք կարողացաք ձեռք բերել:**

- Ցեղասպանության նման լայնածավալ ոճիրի փաստերն անհետացնելը գրեթե անկարելի է, միշտ մի քանի փաստեր կմնան: Գլխավոր ջարդարար դոկտոր Նազըմը եւ երկրորդը՝ Բեհադին Շաքիրը, պատերազմի ավարտից մեկ ամիս առաջ փախցրեցին մեծ թվով կարեւոր փաստաթղթեր: Սակայն ոճիրն այնքան մեծ էր, որ չկարողացան անհետացնել բոլոր փաստերը, մնացած փաստերը դատարանը ձեռք բերեց եւ դրանց հիման վրա ամբաստանագիր կազմվեց: Այնտեղ կան ջախջախիչ փաստեր, օրինակ, 1915-ի հունիսի 23-ին դոկտոր Բեհադին Շաքիրի օգնականը Խարբերդից Նիզամին հեռագիր է ուղարկել՝ ասելով, որ «Խարբերդի խեղճ հայերը ոչ միայն կտարահանվին, այլեւ կենթարկվին ջարդի եւ բնաջնջումի», այս փաստաթուղթը եւս դատարանի ձեռքն անցավ: Նմանատիպ մի քանի ջախջախիչ փաստեր ձեռք բերվեցին գլխավոր ջարդարարների հանցանքը ապացուցելու համար: Մեկ այլ փաստ եւս հիմք էր դատարանի համար, դա 3-րդ բանակի հրամանատար Վեհիբ փաշայի պատրաստած զեկույցն էր: 1918-ի դեկտեմբերի 5-ին 3-րդ բանակի հրամանատարին դատարանը խնդրեց, որ վերջինս որպես ականատես վկայություն տա, եւ Վեհիբ փաշան պատրաստեց 18-էջանոց վկայանություն, որը ներկայումս գտնվում է Երուսաղեմի հայոց պատրիարքարանի արխիվում: Ըստ զեկույցի՝ թուրք զինվորականի եզրակացությունը հետեւյալն էր. «Հայկական տեղահանության եւ ջարդերի գլխավոր պատասխանատուն Իթթիհաս կուսակցության կենտրոնական կոմիտեն է, եւ այդ կոմիտեն այս ոճիրը գործել է կանխամտածված»: Պատերազմական ատյանը այս ընդհարձակ տեղեկագիրը մի քանի անգամ օգտագործեց: Սակայն դատավճիռն ամբողջությամբ հիմնված է ոչ թե վկայությունների, այլ պատերազմի ժամանակ Իթթիհաս կուսակցության եւ Օսմանյան կայսրության պաշտոնական փաստաթղթերի հիման վրա, սա շատ կարեւոր է, քանի որ թուրքերի վարձած մի քանի ամերիկացի եւ եվրոպացի գիտնականներ ասում են, որ այդ դատարանը շինծու դատարան էր, թուրքերը պարտված էին: Եվ որպեսզի այս առարկության դեմ դատարանը ամուր հիմքեր ունենա, պատերազմական ատյանը հետեւյալ քայլն արեց: Երկու նախարարությունների բարձրաստիճան պաշտոնյաներ՝ մեկը՝ ներքին գործոց նախարարության, մյուսը՝ արդարադատության, ամեն անգամ, որ փաստաթղթեր ձեռք էին բերում, բերում էին այս մարդկանց մոտ ստուգելու համար, արդյոք կհամապատասխանի՞ բնագրին, եւ այս պաշտոնյաները Իթթիհաս կուսակցության մնացորդ պաշտոնյաներն էին, որոնք տակավին պատերազմի ավարտին իրենց պաշտոնում էին, եւ չնայած դրան՝ մեկ առ մեկ ստուգեցին եւ հաստատեցին, որ դրանք բնագրերին կհամապատասխանեն: Ամեն մի փաստաթղթի վերեւում եւ ներքեւում հետեւյալ մակագրությունն էր դրվում. «Սա կհամապատասխանի բնագրին»: Այնպես որ այս իրողությունը կարեւոր նշանակություն կտա թուրքական պատերազմական ատյանի ամբաստանագրին եւ այդ դատարանի դատավճիռներին: Այսինքն՝ ամեն փաստ մակագրված էր թուրք պետության պաշտոնյաների կողմից: Իմ կարծիքով՝ թուրքական պատերազմական ատյանը ոչ միայն նախադեպն էր Նյուրնբերգի, այլեւ, հիմնվելով թուրքական պաշտոնական աղբյուրների վրա, անվիճելի կդարձնի Հայկական ցեղասպանության փաստարկումը:

**- Առավել եւս, որ դա եղել է կազմակերպված, այլ ոչ թե ինչ-որ տեղական ուժերի գործողություններ, որովհետեւ այն թուրքերը, ովքեր այժմ ընդունում են Ցեղասպանության իրողությունը, շեշտում են, որ պետականորեն կազմակերպված չէր:**

- Բոլոր դատավճիռների մեջ շեշտված էր, որ Իթթիհադ կուսակցության կենտրոնական կոմիտեն է այս բոլոր որոշումների հեղինակը: Եվ այս կապակցությամբ մեծ նմանություն կա Նյուրնբերգյան դատավորությանը, որտեղ հիմնականում նացիստական կուսակցությունը դատապարտվեց: Եվ այստեղ էլ թուրք պետությունում կառավարող Իթթիհադ կուսակցության ղեկավարությունը դատապարտվեց: Թուրք զորավար Վեհիբ փաշան իր ամբաստանագրի մեջ շեշտում է այս կետը, գործածելով «կանխամտածված» բառը եւ նշում է կուսակցության դերը այս ոճիրի կազմակերպման գործում: Իմ կարծիքով՝ Հայկական ցեղասպանությունը, կրկնում եմ, նախադեպն է Նյուրնբերգի, եւ որեւէ առարկություն չի դիմանում, որովհետեւ հիմնված է թուրք բարձրաստիճան պաշտոնյաների ստուգմամբ հաստատված վավերագրերի վրա, եւ դրանք բոլորը համապատասխանում են բնագրերին:

**- Պարոն Տատրյան, անդրադառնանք ձեր գրքին, որը նաեւ թուրքերեն է թարգմանվել, ինչն աննախադեպ է, քանի որ նախկինում թուրքերենով նմանածավալ աշխատություն երբեք չէր հրատարակվել:**

- Ոչ միայն աննախադեպ է, այլեւ անհավատալի: 85 տարի շարունակ թուրք կառավարությունները ոչ միայն ուրանում էին այս ոճիրը, այլեւ ճնշում էին թուրքական մամուլը եւ թուրք հրատարակիչներին: Ես մինչեւ այսօր կմնամ զարմացած, թե ինչպես թուրք կառավարությունը թույլ տվեց, որ այսպիսի գիրք հրատարակվի: Իմ եզրակացությունն այն է, որ կամ տակավին չեն անդրադարձել գրքի հրատարակությանը եւ կամ էլ քաղաքական այնպիսի նուրբ հանգրվանի մեջ էին, որ ուզում էին անպայման Եվրոպայի աչքը մտնել եւ ճանաչվել իբրեւ արդարադատ, արդարամիտ կառավարություն, եւ այս պատճառով թույլ տվին գրքի հրատարակությունը: Գիրքը շանթահար հարված էր, եւ շատ թուրքեր՝ Անկարայի, Իզմիրի, Ստամբուլի համալսարանների ուսանողներ, ասում են. «Մեր կառավարությունը ինչպե՞ս է մեզ խաբել 85 տարի շարունակ»: Զարթոնք կա, ընդվզում կա իրենց կառավարության դեմ: Թուրքական Բիլգի համալսարանի հրատարակիչն առաջին անգամ հեռախոսով կապվեց ինձ հետ, շնորհավորեց եւ ասաց, որ գիրքը գրեթե սպառվելու վրա է, եւ կպատրաստվեն երկրորդ անգամ հրատարակել:

**- Քանի՞ օրինակ է տպվել:**

- Որքան հիշեմ՝ 1500 կամ 2000, ինչը մեծ բան է ակադեմիական լուրջ գործի համար:

**- Նմանատիպ նոր աշխատանքներ, հասկապես թուրքերեն լեզվով, պատրաստվո՞ւմ եք հրատարակել:**

- Մի քանի ամիս առաջ թուրք հրատարակիչ Զարաքօղլուն, որ հրապարակում է այսպիսի դժվարին, խնդրահարույց գրքեր, հրապարակեց իմ 600 էջանոց գրքից թուրքերեն թարգմանություն, որի վերնագիրն է **«Հայկական ցեղասպանության պատմությունը»**: Որքան գիտեմ, այս գիրքն ավելի գաղտնագողի կբաշխվի, որովհետեւ մեկը Ստամբուլից ասաց, որ ով այդ գիրքը գնի, խանութից դուրս կպահի: Ես կրկին զարմացա, որ թուրքական ոճիրների մերկացումը փաստող հատորը հրատարակվել եւ վաճառվում է Ստամբուլում: Բացի այդ, նույն հրատարակչությունը 6 տարի առաջ հրատարակեց իմ ուրիշ մեկ գործը, որն անգլերեն տպագրել էր ամերիկյան աշխարհահռչակ Եյլի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Կոչվում է **«Հայկական ցեղասպանությունը՝ ըստ միջազգային քրեական օրենքի»**, լայնածավալ ուսումնասիրություն է, 120 էջանոց: Համալսարանում ասացին, որ մենք այս իրավաբանական հանդեսը կհրատարակենք 25 տարի, եւ առաջին անգամ այսքան պահանջ կա, կկազմակերպենք երկրորդ եւ երրորդ հրատարակությունը: Բոլոր՝ ամերիկյան, անգլիական, կանադական համալսարանների իրավաբանական ֆակուլտետներում իմ այս գործը կկարդացվի: Այս ամենով քաջալերված՝ մի իրավաբանական կաճառ հրատարակեց երկրորդ մեկ գործս, որը կկոչվի **«Հայկական եւ հրեական ցեղասպանությունների տարբերության վերլուծությունը»** իրավաբանական տեսակետից, եւ սա նույնպես մեծ տարածում է գտել: «Հայկական ցեղասպանության պատմություն» գիրքը հրատարակվել է նաեւ հունարեն, իսպաներեն, իտալերեն, մի քանի ամիս առաջ նաեւ ռուսերեն՝ Երեւանի մեջ: Ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրենությունը կաշխատի, որ Մոսկվայի մեջ ռուս հրատարակիչները վերահրատարակեն այդ 600 էջանոց գիրքը: Բացի դրանից, վերադառնալուց հետո կհրատարակեմ 2 գործ եւս, մեկը՝ թուրքական ուրացումների ընդարձակ վերլուծությունը եւ մերկացումը, 200 էջանոց հրատարակություն է անգլերեն լեզվով, որ մեկ ամիս անց կհրատարակվի Զորյան հիմնարկի կողմից: 1919-ին հրատարակվեց մի հատոր, ուր ապրիլի 24-ի ձերբակալվածների նկարները եւ կենսագրականները կան: Այս գիրքը անգլերեն թարգմանեցինք, եւ որովհետեւ միայն պատկերներ եւ կարճ նկարագրականներ են, ես գրեցի 120 էջանոց ներածական, բացատրելով այս հայկական ձերբակալությունների իմաստը, որը նախաքայլը եղավ ցեղասպանության: Սա կլինի մեկ- երկու ամիս հետո, այլ ծրագրեր եւս ունեմ: Երբ վերադառնամ, Թաներ Աքչամի հետ կցանկանամ երկրորդ եւ երրորդ հատորը հրատարակել:

**- Դուք մեծ աշխատանք եք տանում Ցեղասպանության ճանաչման գործում, ունե՞ք աշակերտներ, որոնք կշարունակեն այս աշխատանքը աշխարհի տարբեր համալսարաններում եւ Հայաստանում:**

- Սա ինձ համար խոցելի հարց է: Երկու պատճառ կա, որ իմ պատասխանը ժխտական կլինի, նախ՝ ցավով եմ ասում, այսօրվա երիտասարդության մեջ, թե՛ այստեղ թե՛ սփյուռքում, չեն գտնվիր նվիրյալներ: Այսօր համաշխարհային աղետ է, որ երիտասարդները կլանված են մեկ գաղափարով. եթե ուսումն ավարտեն՝ գործ պիտի գտնե՞ն, թե՞ ոչ, եւ այս առումով անտարբերություն կա Հայկական ցեղասպանության մեջ մխրճվելու հարցում: Ավստրալիայից մի երիտասարդ եկավ մեր Զորյան հիմնարկ, շատ խանդավառվեց, որոշեց իր դոկտորական թեզը ցեղասպանությանը նվիրել: Գնաց Ավստրալիա եւ 6 ամիս հետո ասաց՝ պիտի հրաժարվի, քանի որ ուր գործ կփնտրի, կհարցնեն, թե դոկտորականի թեզը ինչի մասին է, կպատասխանե՝ Հայոց ցեղասպանության, անմիջապես հետաքրքրությունը կպակասի, չեն հետաքրքրված: Երկրորդ պատճառը՝ ժամանակ չունեմ, այնքան ծրագրեր ունեմ, ուզում եմ մեռնելուց առաջ արագ-արագ արտադրել, իսկ ուսուցանելը շատ ժամանակ կխլի: Այլ պատճառն այն է, որ Ցեղասպանության ուսումնասիրություն համար լայնածավալ լեզվական հմտություն է պետք, ոչ միայն հայերեն, պետք է իմանալ թուրքերեն, անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն: Իսկ երիտասարդները կամ հայերեն, կամ անգլերեն գիտեն, ոչ թուրքերեն, ոչ օսմաներեն:

**- Վերջին 10 տարիների ընթացքում Ցեղասպանության ճանաչման գործընթացը մեծ թափ է ապրել, մոտ 21 երկրներ ճանաչել են Ցեղասպանությունը: Եվ այդ գործընթացին ինչպե՞ս եք դուք վերաբերվում, մանավանդ որ Հայաստանում մեծ սպասում կար, թե Բարաք Օբաման կարտասանի այդ բառը: Այժմ հիասթափություն կա: Չե՞ք կարծում, որ ավելի ճիշտ կլինի կենտրոնանալ գիտական աշխատանքների վրա:**

- Հայերը հիմա կլանված են այն տպավորությամբ, որ 20-ից ավելի երկրներ ճանաչել են հայկական ցեղասպանությունները: Սա թյուրիմացություն է, քանի որ ճանաչել են ոչ թե գործադիր իշխանությունները, այլ՝ խորհրդարանները: Խորհրդարանը հեղինակություն չունի արտաքին քաղաքականության մեջ: Միայն Ֆրանսիան է, որտեղ թե՛ օրենսդիր եւ թե՛ գործադիր իշխանությունները ճանաչեցին, նույնիսկ Ռուսաստանը միայն խորհրդարանի մակարդակով է ճանաչել: Այնպես որ մենք մեզ չպետք է խաբենք, համընդհանուր ճանաչում չկա: Քանի դեռ Թուրքիան ՆԱՏՕ-ի անդամ է, ոչինչ չի լինի, եթե մեկը ինձ հարցնի՝ ի՞նչ եզրակացության հանգեցիր Ցեղասպանության ճանաչման խնդրի մեջ խորանալով, ապա պիտի ասեմ, որ մեկ գործոն կա, որ որոշիչ է՝ ուժը եւ հզորությունը: Թուրքիան, երբ տկար էր, 1918-20-ին խոստովանություններ արեց, սակայն երբ քեմալիզմը նվաճումներ արձանագրեց եւ պարտության մատնեց թե՛ Հայաստանին եւ թե՛ Հունաստանին, այդ խոնարհ, խոստովանության պատրաստ թուրք ժողովուրդը մեկեն դարձավ ամբարտավան: Մեր ամբողջ հարցն այս է, որ մենք տկար պետություն ենք ի համեմատություն Թուրքիայի եւ երկար պիտի սպասենք, մինչեւ նրանք ճանաչեն: Եվ դա կլինի, եթե Թուրքիան զգալիորեն տկարանա: Այս տկարության հեռանկարը՝ եթե ներքին խռովություն լինի, եւ թուրքը թուրքի հետ բախվի, եւ քաղաքացիական պատերազմ լինի կամ ուրիշ պատճառներով հեռանա ՆԱՏՕ-ից... Սակայն ճագարի պես կաճեն, արդեն 72 միլիոն են:

**- Իսկ եթե թուրք-քուրդ բախումներ լինեն: Քրդերը նույնպես արագ են աճում:**

- Ամենախոցելի խնդիրը մեզ համար այն է, որ Թուրքիայում որպես արմատական, բացառիկ հեղինակություն ոչ թե թուրք պետությունն է՝ վարչապետը կամ նախագահը, այլ՝ բանակը: Թուրքական բանակը այնպես կզինվի, որ նույնիսկ Ամերիկայի մեջ պետական մարդիկ կասեն, թե ինչո՞ւ այդպես կզինվեն: Հզոր բանակ ունեն, եւ հարեւան ոչ մի պետություն չի կարող սպառնալ: Ես շատ կմտահոգվեմ, որ եթե առիթ ստեղծվի, կներխուժեն եւ կնվաճեն Հայաստանը եւ Հունաստանը: Ես գտա մի վավերագիր, որի մասին շատ քիչ պատմաբաններ գիտեն: 1920-ին Հայաստանը նվաճող Քյազիմ Կարաբեքիրը հետագայում 1200 էջանոց գիրք հրատարակեց «Թուրքիայի անկախության պատերազմը» վերնագրով, որտեղ կա մի հեռագիր՝ թվագրված 1920-ի նոյեմբերի 8-ով, եւ ես կզարմանամ՝ ինչպես այդ գաղտնի հեռագիրը հրատարակեցին: Կարաբեքիրի բանակը պարտության մատնեց հայկական բանակին, եւ երբ Հայաստանի կառավարությունը ստիպված եղավ զինադադար կնքել, Կարաբեքիրը գաղտնի հեռագիր ստացավ Անկարայից, որտեղ ասված էր. «Կուզենք ձեզի հայտնել, որ Թուրքիան 2 հավերժ թշնամի ունի՝ արեւելքում Հայաստանն է, իսկ արեւմուտքում՝ Հունաստանը, եւ երբեք հնարավոր չէ ակնկալել, որ մենք այս երկու ազգերի հետ կարող ենք հաշտ ապրիլ, հետեւաբար ձեզի կհրահանգենք, որպես գլխավոր նպատակ, ընդունենք հետեւյալ հրամանը, Հայաստանը քաղաքականորեն եւ ֆիզիկապես պետք է աշխարհի երեսից վերանա, բայց որպեսզի այս ծրագիրը իրագործվի, դուք պետք է (խաբեպատիր) դիրք բռնեք Հայաստանի կառավարության հանդեպ»: Աշխարհի մեջ սա բացառիկ բան է, երբ պաշտոնական Անկարայի կառավարության արտգործնախարարը բացահայտորեն ասում է՝ խաբեք պարտված հայերին, «մեր գլխավոր եղբայրները ազերիներն են, մեր գլխավոր նպատակն է վերացնել Հայաստանը եւ օգնել Ադրբեջանին»: Այդ նույն օրը՝ 1920-ի նոյեմբերի 8-ին, Անկարայի արտգործնախարարը հեռագիր կուղարկե Հայաստանի կառավարությանը եւ կհայտարարե, թե պատրաստ են օգնել Հայաստանի սոված ժողովրդին: Նախարարը մեկ օրվա մեջ երկու հակադիր նամակներ կուղարկե, կեղծավորության, խաբեբայության այս փաստերը մինչ օրս չեն վերլուծվել:

Երբ հանդիպեցի Հայաստանի նախագահների հետ, անդրադարձա այս հարցին եւ ասացի՝ դուք՝ կովկասահայերդ, փորձառություն չունեք թուրքերի հետ, թուրքահայերին մի քիչ լսեք: Այն ժամանակ էլ Հայաստանի Հանրապետությունում հայ ժողովրդի հիմնական քաղաքական դերակատարները կովկասահայերն էին, այնքան միամիտ: 1911-12-ին Բուլղարիայից զորավար Անդրանիկը գաղտնի Ստամբուլ եկավ եւ ասաց Դաշնակցության ղեկավարությանը, թե «այս ի՞նչ կանեք, ուրանք մեր մուխը կմարեն», եւ Ակնունին Թալեաթի հետ միշտ բանակցեր եւ այնքան մտերմացավ վերջինիս հետ, որ ասում էր, թե ուրանք նոր թուրքեր են, եվրոպացի մարդիկ են, ջենթլմեն են: Միակ մարդը Դաշնակցության մեջ, ով կհասկնար թուրքերին եւ հեռացավ կուսակցությունից, Շահան Նաթալին էր:

Եվ այսօր վարչապետ Էրդողանի այս դիմափոխությունը, մեկ՝ առանց պայմանի եւ հետո՝ պայմանով, ամեն ինչ բանակի հրամանով է: Թուրքիայի կառավարությունն ամեն 10 օրը մեկ կանոնավոր խորհրդակցում է բանակի հետ, եւ վերջինս իր կամքն է թելադրում: Իմ կարծիքով՝ շատ զգույշ պիտի լինենք եւ արթուն մնանք ու կասկածամտությամբ մոտենանք թուրք դիվանագիտությանը:

Հարցազրույցը վարեց
ԱՐՄԵՆ ՄԱՆՎԵԼՅԱՆԸ

AZG NEW 5.QXD 8/18/2009 9:28 PM Page 1



# Անորոշ նամակն ու Վրաստանի նախագահի խորհրդականի որոշակի մեկնաբանությունները

## Ձեռաց մեղադրանքներ «Միասնական Ջավախքին»

Վրաստանում բնակվող հայերը նամակ են հղել Հայաստանի կառավարությանը, որում խնդրում են իրենց պաշտպանել վրացիներից եւ Վրաստանում բնակվող ադրբեջանցիներից: Այսպիսի տեղեկություն է տարածել «Գրուզիա օնլայն» կայքէջը` հղում կատարելով վրացական «Ախալի թաոբա» թերթին:

Ըստ հրապարակման, Հայաստանի կառավարությանն ուղղված նամակը ստորագրել են Վրաստանի Քվեմո-Քարթլիի տարածաշրջանի (մեծամասամբ ադրբեջանաբնակ) հայկական գյուղերի բնակչության ներկայացուցիչներ: Որեւէ մանրամասն, թե որ բնակավայրերի հայ բնակիչներն են ստորագրել նամակը եւ կոնկրետ ինչ բովանդակությամբ` չի հաղորդվում:

Դրա փոխարեն թերթը մեջ է բերել Վրաստանի նախագահի` ազգային փոքրամասնությունների հարցերով խորհրդական Վան Բայբուրթի հայտարարությունը, թե վերջինս ծանոթացել է այդ նամակին եւ կարող է ասել, որ դրանում ներառված ամեն ինչ սուտ է: Բայբուրթի խոսքից արվող մեջբերման համաձայն, նամակում հիշատակվում է` Սամցխե-Ջավախք-Ծալկա, ինչն էլ Վրաստանի նախագահի խորհրդականին հիմք է տվել հայտարարելու, թե «նամակը ոչ միայն պատմության, այլեւ աշխարհագրության նենգափոխում է պարունակում»:

Ըստ Վան Բայբուրթի, «այդ տերմինն օգտագործում է միայն մեկ կազմակերպություն` «Միասնական Ջավախքը» («**Ազգի**» ընթերցողներին «Միասնական Ջավախք» կազմակերպությունը ծանոթ է հրապարակումներում այդ կազմակերպության գործունեությանն անդրադարձով եւ դրա առաջնորդ Վահագն Չախալյանի դատավարության ընթացքի հետեւողական ներկայացմամբ - Ա.Հ.), որ ֆինանսավորվում է Ռուսաստանից եւ հասկանալի է, թե ինչին է ծառայում նման նամակը»:

Բայբուրթը նաեւ ժխտել է վրաստանաբնակ հայերի ու ադրբեջանցիների որեւէ հակադրության առկայությունը: Ինչ վերաբերում է Ծալկայի հարցին, ապա Վրաստանի նախագահի խորհրդականը բացառել է Հայաստանի կողմից տվյալ տարածքի հանդեպ որեւէ հավակնության հնարավորությունը, քանի որ, նրա խոսքերով, «Երեւանում հիանալի հասկանում են իրավիճակն ու տվյալ թեման երբեք չի կարող դառնալ ակտուալ»:

Հայաստանի վարչապետին, արտաքին գործերի, սփյուռքի նախարարներին, ԱԺ «Հանրապետական»,«Բարգավաճ Հայաստան», «Ժառանգություն» խմբակցություններին ուղղված նամակում, որն ինչ-որ անորոշ էլեկտրոնային հասցեից տարածվել է օգոստոսի 3-ին, նշվում է. «Վրաստանի Քվեմո Քարթլի նահանգի Դմանիսի, Բոլնիսի, Թեթրիծղարոյի եւ Մառնեուլի շրջանները կազմում են պատմական հայկական Գուգարք նահանգի մի քանի գավառները... Խորհրդային տարիներին Քվեմո Քարթլի նահանգում աստիճանաբար սկսեց ուժեղանալ ադրբեջանական գործոնը, իսկ հայերը տարածաշրջանում կամ աստիճանաբար վրացականացվում, կամ հեռանում են»:

Ըստ նամակի հեղինակների, որ բնավ էլ պարզ չէ, թե ովքեր են եւ ում խոսքերն է այդպիսի մեկնաբանությունների արժանացրել Վրաստանի նախագահի խորհրդականը, Հայաստանի իշխանություններն ու հայ հասարակությունը անուշադիր են հայկական գյուղերի բնակչության հանդեպ Վրաստանի հակահայկական քաղաքականության դրսեւորումներին եւ տեղի ադրբեջանցիների ագրեսիվ վերաբերմունքին:

«Հակահայկականության դրսեւորումներն առավել զգալ են տալիս Մառնեուլի հարավային շրջանում գտնվող հինգ` Խոժոռնի, Ջանախչի, Աղքյորփի, Դամիա, Բրդաձոր հայկական գյուղերում, որոնք մինչ 1930-ական թվականները փաստացի գտնվել են Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության կազմում», նշվում է նամակում, որի տակ ստորագրողներն էլ հենց այս գյուղերի անունից են հանդես գալիս:

Ելնելով նշվածից, հայկական այդ գյուղերի բնակիչները պահանջ են ներկայացրել Հայաստանի կառավարությանն ու Ազգային ժողովին. «Ուշադրության կենտրոնում պահել Քվեմո Քարթլի նահանգի հայաբնակ շրջաններում զարգացող իրավիճակը, լուծումներ տալ տեղի հայ բնակչության տնտեսական, սոցիալական հիմնահարցերին եւ տարածաշրջանում հզորացնել հայկական գործոնը, պատասխանատվության ենթարկել Հայաստանի այն անձանց եւ կազմակերպություններին, որոնք ներկայանում են որպես փրահայոց հարցերով «մտահոգ» անձինք, ովքեր իրենց գերպասիվությամբ, բայց նորանոր գումարներ ստանալով մեր հարցերը լուծելու համար, մեր գյուղերն անտերության են մատնել»:

Պահանջների շարքը շարունակվում է «Սամցխե-Ջավախք-Ծալկա տարածաշրջանի հետ համատեղ Հյուսիսային Լոռու քաղաքական հիմնախնդիրը ճանաչելու եւ չդիտարկելու այն զուտ սոցիալ-տնտեսական կամ սփյուռքի հիմնահարց, կազմակերպելու Հայաստանի հասարակական-քաղաքական, պետական ու կառավարական պատվիրակությունների այցելություններ տեղի հայկական գյուղեր հայ բնակիչների հիմնախնդիրներին մոտիկից ծանոթանալու, վրացական ու ադրբեջանական քմահաճույքների առջեւ մեզ միայնակ չթողնելու համար»:

Որպես վերջին պահանջ ներկայացված է Հայաստան-Վրաստան սահմանագծի վերաճշտման ընթացքում հաշվի առնել նամակում նշված հայկական գյուղերի հայաբնակ լինելն ու աշխարհագորեն Լոռի աշխարհի անքակտելի մաս հանդիսանալը:

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՄԱՌՈՏ

## Ռուսական հիդրոէլեկտրակայանի վթարի զոհերի թիվը հասել է 12-ի

**Ռուսաստանի Սայանո-Շուշենսկայա հիդրոէլեկտրակայանում երկուշաբթի առավոտյան տեղի ունեցած խոշոր վթարի զոհերի թիվը նախնական տվյալներով հասել է 12-ի: 14-մարդ վիրավորվել է, 64 մարդ անհետ կորած է: Ամբողջությամբ ոչնչացվել են ՀԷԿ-ի երեք էներգաբլոկները: Վթարի պատճառները ճշտվում են:**

## «Ռուս դիվանագետների վտարումը Չեխիայից սադրանք է»

**Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Լավրովը «սադրանք» է որակել Չեխիայից երկու ռուսաստանցի դիվանագետների վտարումը: Պրահայում Ռուսաստանի դեսպանատան 2 աշխատակիցներին վտարելու Չեխիայի կառավարության որոշման մասին ավելի վաղ հաղորդել էին չեխական լրատվամիջոցները: Չեխիայի հատուկ ծառայությունների տվյալներով` նրանք աշխատել են ռուսական հետախուզական գործակալությունների համար:**

## Քլինթոնն ու Մուբարաքը քննարկել են մերձավորարեւելյան խնդիրները

**ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնն ու Եգիպտոսի նախագահ Հոսնի Մուբարաքը Վաշինգտոնում քննարկել են Մերձավոր Արեւելքում խաղաղ գործընթացի վերականգնման հեռանկարները: Հանդիպումից հետո պետդեպարտամենտի ներկայացուցիչը հայտարարել է, որ Վաշինգտոնը առաջիկայում իսրայելա-պաղեստինյան երկխոսության շարունակման հեռանկարներ է կանխատեսում: Եգիպտոսը բազմիցս հանդես է եկել որպես երկխոսության միջնորդ: Երեկ Սպիտակ տանը Մուբարաքին ընդունել է նաեւ ԱՄՆ-ի նախագահ Բարաք Օբաման:**

## Իրանի նախագահը մտադիր է առնվազն երեք կանանց նախարար նշանակել

**Ըստ PanARMENIAN.Net-ի, Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադը ծրագրում է առնվազն երեք կանանց նախարար նշանակել: Այդ մասին իսլամական հանրապետության ղեկավարը հայտնել է տեղական հեռուստաալիքներից մեկին: Իսլամական հանրապետության պատմության մեջ նման բան չի եղել. կանայք առաջատար պաշտոններ չեն զբաղեցրել Իրանի կառավարությունում: Նախագահի խոսքով, ինքը մտադիր է Ֆաթեմեհ Աջարլուին նշանակել սոցիալական զարգացման նախարար, իսկ Մարզիհ Վահիդ Դաստջերդին ենթադրվում է, որ կգլխավորի առողջապահության նախարարությունը: Նախարարների գրասենյակի երրորդ կին ներկայացուցչի անունն Ահմադինեժադն ավելի ուշ կինչեցնի: Իրանի առաջնորդը հայտարարել է, որ կառավարության նոր անդամներին պատրաստվում է ներկայացնել երկրին մի քանի օր անց: Գործակալությունը նշում է, որ Աջարլուի նախարար նշանակումը շատերը բացասաբար կընդունեն: Իրանական մամուլը հաղորդում էր, որ խորհրդարանական Աջարլուն եւ նրա մի քանի գործընկերները երկու տարվա ազատազրկման են դատապարտվել գաղտնի տեղեկատվության հրապարակման համար, սակայն այդ տվյալները պաշտոնական հաստատում չստացան:**

**Ահմադինեժադի կառավարությունում նախարարի պաշտոնին հավակնող մյուս կինը` Վահիդ Դաստջերդին, միջադեպերի չի մասնակցել, հաղորդում է Lenta.ru-ն: Ահմադինեժադի նախորդ վարչակազմում երկու կին պաշտոնյա կար, սակայն նրանցից ոչ մեկը նախարարի պաշտոն չէր զբաղեցնում: Այդ միջոցին նախարարի պաշտոնում կանանց նշանակելու Իրանի նախագահի որոշումը առաջ է բերել նրա որոշ կողմնակիցների բացասական արձագանքը: Այդպես, նախագահի վարչակազմի մամլո քարտուղարի կինը քննադատել է կառավարության ձեւավորման հանդեպ առկա մոտեցումը փոխելու Ահմադինեժադի ցանկությունը եւ հայտարարել, որ կանանց առկայությունը նախարարների գրասենյակում անխուսափելիորեն կհանգեցնի երկրի ղեկավարման համակարգի փլուզմանը: «Դուք իրավասու տղամարդկանց պակաս չունեք», նշել է նա Իրանի նախագահին հղած իր նամակում: Ահմադինեժադը պետք է նախարարների նոր գրասենյակի կազմավորումն ավարտի այսօր:**

# «ԱՊՀ կազմում Վրաստանի ներգրավվածությունը դառնում էր անհեռանկար եւ անիմաստ»

**Բանասիրական գիտությունների թեկնածու Հայկազուն Ալվրցյանը վստահ է, որ Վրաստանի` ԱՊՀ կազմից դուրս գալու արձագանքները բուռն են, որովհետեւ այն մեկ տարվա խոսակցություններից հետո վերջապես իրավական լուծում ստացավ: ԱՊՀ կազմից դուրս գալու դիմում Վրաստանը ներկայացրել էր մեկ տարի առաջ` օգոստոսյան պատերազմի ավարտից հետո. կանոնակարգի համաձայն` այն իրավական ուժ է ստանում, եթե 1 տարվա ընթացքում դիմումը փոփոխության չի ենթարկվում:**

**Ըստ էության, Վրաստանը ԱՊՀ անդամ էր դարձել հիմնականում քաղաքական նպատակներով: 1991-ին ԱՊՀ-ի ձեւավորումը հաստատող փաստաթղթում Վրաստանի ստորագրությունը չկար: Միայն 1993-ին` վրաց-աբխազական պատերազմի ժամանակ, երբ պարզ դարձավ, որ Օսիայի օրինակով փաստացի Վրաստանից անջատվեց նաեւ Աբխազիան, Վրաստանի նախագահ Էդուարդ Շեւարդնաձեն մեծ ջանք գործադրեց վրաց հասարակությանը եւ հատկապես քաղաքական շրջանակներին ու կուսակցություններին համոզելու, որ այդ երկու հանրապետությունները կարող են վերադարձվել, եթե Վրաստանն անդամակցի ԱՊՀ-ին: Շեւարդնաձեն վստահ էր, որ այդ կառույցի շրջանակներում հնարավոր կլիներ բարձրացնել Վրաստանի ամբողջականության հարցը: Շեւարդնաձեի մեկամյա ջանքերը հաջողությամբ պսակվեցին, քաղաքական վերնախավը համոզվեց, որ լուծման այլ տարբերակ չկա, եւ 1994-ին` երեք տարի ուշացումով, Վրաստանը դարձավ ԱՊՀ անդամ:**



**Ալվրցյանը նկատում է, որ Վրաստանը միայն քաղաքական խնդիրները չէր հետապնդում. ԱՊՀ-ն հնարավորություն էր տալիս կնքելու բազմաթիվ գործարքներ եւ առեւտրի ոլորտում օգտվելու մի շարք արտոնություններից:**

**2008-ը ճակատագրական տարեթիվ կարելի է համարել Վրաստանի արտաքին քաղաքական կյանքում: Սաակաշվիլու համար պարզ դարձավ, որ եթե ոչ ընդմիշտ, գոնե երկար ժամանակահատվածով կորցրել է Աբխազիան եւ Օսիան: Իսկ հետ բերելու հեռանկարներն էլ ոգեշնչող չեն: Բացի այդ, Վրաստանին նյարդայնացնում էր Ռուսաստանի` իր հանդեպ վարած կոշտ քաղաքականությունը:**

**Վրաստանը ԱՊՀ կազմում այն պետություններից էր, որ ուներ հստակ արեւմտամետ կողմնորոշում, ջանքեր էր գործադրում ՆԱՏՕ-ին, ԵՄ-ին անդամակցելու համար, նաեւ ռազմավարական լուրջ համաձայնագրեր ուներ ԱՄՆ-ի հետ, իսկ ԱՊՀ անդամակցությունը խանգարում է Վրաստանին լիովին համարվելու ՆԱՏՕ-ի մաս: «Սաակաշվիլին հասկացավ, որ ԱՊՀ կազմում Վրաստանի ներգրավվածությունը դառնում էր անիմաստ եւ անհեռանկարային: Սակայն իրականությունն այն է, որ Վրաստանը գործնականում վաղուց ԱՊՀ անդամ չէ: Սաակաշվիլու իշխանության գալուց եւ ռուս-վրացական հարաբերությունների սրումից հետո Վրաստանը ԱՊՀ համաժողովներին չէր մասնակցում, ավելին` փորձում էր ամեն կերպ այլ կազմակերպությունների միջոցով հակադրվել ԱՊՀ-ին` հատկապես Ռուսաստանի էներգետիկ քաղաքականությանը»:**

**Ալվրցյանի խոսքերով` այս հարցում վրաց հասարակության եւ իշխանության տեսակետերը համընկնում են: Վրացական մամուլը որեւէ լուրջ հակազդեցությամբ չներկայացավ: Միայն Շեւարդնաձեն ափսոսանք հայտնեց: Սակայն անգամ այս կարգավիճակում էլ Վրաստանը իրավունք ունի օգտվելու ԱՊՀ ավելի քան 70 պայմանագրերից ու համաձայնագրերից:**

**Հայագետը փաստում է, որ հայ-վրացական քաղաքական ասպարեզում Վրաստանի` ԱՊՀ կազմից դուրս գալու հանգամանքը որեւէ լուրջ փոփոխություն չի առաջացնի: «Այդ հարաբերությունները Հայաստանի համար այնքան կարեւոր են, որ ԱՊՀ տարածքում լինել կամ չլինելը էական նշանակություն չի կարող ունենալ: Այդ հարաբերությունները կենսական նշանակություն են սկսում ունենալ նաեւ Վրաստանի համար: Գիտակցել է, որ կորցրել է իր երբեմնի նշանակությունը Արեւմուտքի եւ ԱՄՆ-ի համար: Ակնհայտ է, որ երկար ժամանակահատվածով Վրաստանը չի դառնա ՆԱՏՕ-ի անդամ: Աբխազիան եւ Օսիան չեն վերադարձվի: Վրաստանը կարծես դրա հետ հաշտվել է: Նրա համար կարեւոր նշանակություն ունեն Հայաստան-Իրան կոմունիկացիոն ոլորտի զարգացումները, գազամուղն ու ստեղծվելիք երկաթուղին: Վրաստանի` ԱՊՀ անդամ լինել-չլինելը երբեւէ ազդեցություն չի ունեցել Հայաստանի համար: Դա է պատճառը, որ Հայաստանը որպես պետություն չճանաչեց Աբխազիայի եւ Օսիայի անկախությունը»:**

**Հայագետը հիշեցնում է, որ ԱՊՀ-ից դուրս գալը դե ֆակտո տեղի էր ունեցել մեկ տարի առաջ` բացասական ազդեցություն թողնելով ջավախահայության վրա: «Ռուսաստանի հետ դիվանագիտական հարաբերությունները խզվեցին, մինչդեռ ջավախահայության ապրուստի միակ ելքը Ռուսաստանում արտագնա աշխատանքն էր»:**

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ԳՈՀԱՐ-ը հայ երգերով թնդացուց Հալեպի երկնակամարը



Դամասկոսում հուլիսի 9-ին տեղի ունեցած ԳՈՀԱՐ-ի փայլուն համերգի լուրն ավելի էր ոգեւորել Հալեպի հայությանը, որն անհամբեր սպասում էր Հայաստանից ժամանած ավելի քան 150 արվեստագետների ելույթին՝ պատմական բերդի ամֆիթատրոնում: Հուլիսի 16-ին եւ 17-ին նախատեսված համերգների տոմսերն անմիջապես սպառվել էին եւ ԳՈՀԱՐ-ի պատասխանատուները հոգացել էին, որ հայ երգի անաղարտ հնչյուններին ականջալուր լինեն հնարավորին շատ սիրիահայեր, դրա համար էլ հուլիսի 15-ին ավելացրել էին ԳՈՀԱՐ-ի եւս մեկ ելույթ, որը մյուս երկուսի հետ միասին անցավ ոգեւորված բազմության հայացքների ու բերդը թնդացնող ծափողջյունների ներքո: Ոմանք հոտընկայս կամ աստիճաններին նստած էին հետեւում ԳՈՀԱՐ-ի գոհար կատարումներին եւ խոստովանում էին, որ չեն մտաբերում նման խանդավառ ելույթ Հալեպի բերդի ամֆիթատրոնում: Ներկաներից մեկը՝ իրաքահայ Սեպուհ Գարաջյանն իրեն բախտավոր էր համարում, որ Սիրիա այցելությունը համընկել է ԳՈՀԱՐ-ի ելույթի հետ, որի ունկնդրումն իրեն համար դարձել է հայության արմատներին ավելի ամուր կանգնելու դեղամիջոց:

Կիլիկիայի հայկական թագավորության դրոշակների ծածանումն ու հայկական այբուբենի լուսային արտացոլումը միտված էին Հալեպի հայկական հնչյուններով ողողված երեք երեկոների խորհրդավորությունն ու հայկականությունն ապահովելուն:

ԳՈՀԱՐ-ի նկատմամբ տեւական ուշադրությամբ ու հոգատարությամբ ապրող Հարութ Խաչատուրյանի խոսքով, ԳՈՀԱՐ-ի դրոշակն է Կիլիկիո դրոշակը եւ ԳՈՀԱՐ-ի ճամփան՝ ԱԲԳ-ի ճամփան, որոնցով պիտի շարունակենք եւ ուրախանանք: Իսկ այդ շարունակվող ճանապարհին ԳՈՀԱՐ-ը մտել է հարյուր հազարավոր ընտանիքներ ու հայ երգով ուրախացրել միլիոնավոր հայերի: Պատահական չէ, որ Հալեպի համերգներին մարդիկ ներկա էին ընտանիքներով, նույնիսկ իրենց փոքրիկ զավակներով: Ծնողներից մեկն ասաց, որ իր տղան ԳՈՀԱՐ-ի շատ երգեր գոց է սովորել եւ այժմ, երբ բեմից հետեւում է երաժշտախմբի կատարումներին՝ ոգեւորված ձայնակցում է: Իսկ երիտասարդ մի մայր հուզված նշեց, որ ԳՈՀԱՐ-ի համերգի ժամանակ կրկին հպարտությամբ է լցվել, որ հայ է եւ ուրախ է, որ իր աղջիկը փոքր տարիքից հնարավորություն ունի ԳՈՀԱՐ-ի միջոցով դիտել ու սիրել բոլոր ժամանակների հայկական սիրված երգերը: ԳՈՀԱՐ-ը արվեստների մեկենաս Հարութ Խաչատուրյանի մտահղացումն ու իրագործումն է, ով 1997 թվականին՝ ԳՈՀԱՐ-ի հիմնադրումից հետո շարունակում է նյութապես ու բարոյապես թիկունք կանգնել խմբի բոլոր գործողություններին՝ ի հիշատակ իր հոր՝ Արամ Խաչատուրյանի եւ ի հարգանք մոր՝ Գոհար Խաչատուրյանի: Տիկին Գոհարը, որ ներկա էր Հալեպի համերգներից երկուսին, մեզ հետ զրույցում նշեց, որ հպարտ է ԳՈՀԱՐ-ի հաջողություններով, քանի որ այս խմբով հայ երգը մտավ հայկական բոլոր օջախներ: Իսկ Հալեպի պատմական բերդի ամֆիթատրոնում ԳՈՀԱՐ-ի ելույթը, տիկին Գոհարի խոսքով, ավելի գեղեցիկ ու տպավորիչ է դարձել ԳՈՀԱՐ-ի հերթական համերգը: Հալեպի անառիկ բերդը գրավել էին հայկական երգի գոհարները, մեր պարուհիների նազանքները, հայոց լուսագիր տառերն ու Կիլիկիայի դրոշակները: ԳՈՀԱՐ-ը աշխարհով մեկ հպարտությամբ է ծածանում է 11-ից 14-րդ դարերի Կիլիկիայի հայկական պետության դրոշակները եւ ջանում է առույգ պահել հայոց փառապանծ այբուբենը:Դամասկոսի եւ Հալեպի համերգները կայացան ի պատիվ հայ ուսուցչի:Այս համերգներով ԳՈՀԱՐ-ը նաեւ իր շնորհակալությունը հայտնեց Սիրիային, որ ապաստան է տվել Կիլիկիայից գաղթած հայերին, ովքեր նաեւ իրենց երկրորդ հայրենիքում էլ կենդանի են պահել ու մեր ծնողների միջոցով մեզ են փոխանցել հայկական երգը, այբուբենն ու դրոշը:





Հարութ Խաչատուրյանի խոսքով, մինչ մեր ծնողները կան, մենք չենք կորցնի եւ պիտի փորձենք մենք էլ նոր սերունդին փոխանցել, ինչպես որ ԱԲԳ-ն ավազի վրա մեր երեցներին փոխանցեցին, նույնն էլ մենք, Հարութ Խաչատուրյանի խոսքով, պետք է «արդի ձեւերով, գեղեցիկ ձեւերով, փայլուն ձեւերով եւ գունավոր ձեւերով» փոխանցենք նոր սերունդին, նոր եկողներին:

Ինչպես ԳՈՀԱՐ-ի բոլոր համերգներին՝ Հալեպում նույնպես բեմի տրամադրությունը փոխանցվել էր ոգեւորված դահլիճին: Կիլիկիայի դրոշները բարձրացրել էին ներկաների տրամադրությունն ու ամֆիթատրոնում մի բռունցք դարձած հայությունը միասին պարում էր մեր խրոխտ պարերը, կատարում մեր հպարտ երգերը: Բեմում ու դահլիճում միավորվել էին երգն ու պարը, իսկ բեմից դուրս՝ համերգի կազմակերպման տեխնիկական ինտերնացիոնալ անձնակազմը. միասին աշխատում էին հայը, գերմանացին ու անգլիացին: Համերգի հեռուստատեսային տարբերակի ռեժիսոր Ռասսել Թոմասը վերջին անգամ աշխատել է բրիտանական U2 խմբի, իսկ Ռալֆ Կեսսլերի գլխավորած հնչյունային անձնակազմը՝ հույն հայտնի երգիչ Յանիի համերգների կազմակերպման ուղղությամբ: Նրանք ԳՈՀԱՐ-ի համերգներից հետո աշխատելու են որակով եւ բովանդակությամբ աննախադեպ խտատեսասկավառակի(DVD-ի) պատրաստման ուղղությամբ, որ աշխարհի տարբեր անկյուններում ապրող հայության համար հանդիսանալու է հայ երգի ու տառի պահպանման կոչնակ:

Հայրենիքից հեռու բնակվողների համար իսկական թթվածին է ԳՈՀԱՐ-ի ելույթները, որոնք երգի միջոցով ուժ են տալիս հայության արմատներին: Իսկ դրանք առաջիկայում ավելի են ամրանալու, քանի որ ԳՈՀԱՐ-ը շարունակելու է իր հնչյուններով թնդացնել պարիսպներ ու բերդեր՝ հայոց տառերի հանդեպ ունեցած հարգանքով զարմացնելով օտարներին ու Կիլիկիայի դրոշակները ծածանելով աշխարհով մեկ՝ ապացուցելու, որ հայը միշտ երգել է ու նաեւ երգով է հաղթել:

**Թղթակից**

## «Կամարը» կկամրջի հայ ճարտարապետներին

**Շինարարական ասպարեզի հայ մասնագետների «Կամար» ընկերության գործունեությունը սկսվել է գարնանը: Իր տեսակով միակն է, որ Կանադայում համախմբում է հայ ճարտարապետներին, ճարտարագետներին: Կազմակերպության գլխավոր նպատակներից է Հայաստանի եւ սփյուռքի այլ գաղթօջախների հայ ճարտարապետների հետ հարաբերություններ հաստատել՝ հետագա գործակցության նպատակով:**

**«Կամարը ոչ միայն միաժամանակ ճարտարապետական եւ ճարտարագիտական հատկանշական տառ է, այլեւ բնորոշում է երկու ծայրամասեր միմյանց կամրջելու հասկացությունը: Տվյալ պարագայում կամրջում է աշխարհի տարբեր ծայրերում բնակվող հայ մասնագետներին», կազմակերպության վերաբերյալ այսպիսի տեսակետ է արտահայտել «Կամարի» հիմնադիր նախագահ, ճարտարապետ Վրեժ-Արմեն Արթինյանը:**

**Կամարի առաջիկա ծրագրերից է միանալ նմանատիպ այլ կազմակերպություններին եւ դառնալ շինարարական մարզի հայ մասնագետների համահայկական ցանցի մաս, որի առաջացման գաղափարը նախաձեռնել էր ՀՀ սփյուռքի նախարարությունը:**

**Աշնանը կգումարվի առաջին պաշտոնական ընդհանուր ժողովը՝ մասնակցությամբ ներկա եւ ապագա բոլոր անդամների: Կընտրվեն վարչության անդամները, կներկայացվեն կազմակերպության նպատակներն ու առաջիկա ծրագրերը:**

Հ. Հ.

## Դեն Բրաունի աղմկահարույց «Կորցած խորհրդանիշ» գրքի շնորհանդեսը՝ սեպտեմբերի 15-ին




**«Դա Վինչիի կոդը» եւ «Հրեշտակներ ու սատանաներ» բեսթսելլերների հեղինակ Դեն Բրաունի նոր՝ «Կորցած խորհրդանիշ» գրքի շնորհանդեսը տեղի կունենա սեպտեմբերի 15-ին ամերիկյան մի շարք գրախանութներում: Գրքի հերոսը Բրաունի ստեղծագործությունների սիրահարներին արդեն հայտնի Ռոբերտ Լենգդոնն է: Վեպում գործողություններն ընթանում են 12 ժամվա ընթացքում: Այլ մանրամասներ հեղինակը չի հայտնել: Հայտնի է գրքի սկզբնական տպաքանակը՝ ավելի քան 6.5 մլն: Սեպտեմբերի 15-ին տեղի կունենա նաեւ գրքի էլեկտրոնային տարբերակի շնորհանդեսը:**

**Ավանդույթի համաձայն՝ Բրաունի այս ստեղծագործությունն էլ մինչ հրատարակվելը մեծ աղմուկ է հանել: Բրաունի ընկերները հավաստիացնում են, որ հրատարակումից հետո արձագանքներն ավելի բուռն կլինեն:**

**Այժմ մեծ աղմուկ է հանել գրքի վերնագրի ընտրությունը: Մինչ վեպի վերջնական վերնագրի հրապարակումը ամերիկացի լրագրողները տարբեր վարկածներ էին առաջադրում, որոնցից ամենահավանականը «Սողոմոնի բանալին» էր:**

**Բանն այն է, որ 2006-ին Բրաունը հետեւյալ տեղեկությունը տարածեց. «Հաջորդ գրքի բովանդակությունը կարելի է պարզել ուշադիր հետեւելով «Դա Վինչիի ծածկագիրը» գրքի շապիկին»:**

**Մի շարք հեղինակավոր ամսագրերի լրագրողներ հանգեցին եզրակացության, որ Բրաունի երրորդ գրքի իրադարձությունները զարգանալու են Վաշինգտոնում: Գլխավոր դերակատարություն կունենան մասոնները, մորմոններն ու ոստիկանությունը:**

**Ի դեպ, Բրաունը մի քանի անգամ հետաձգել է գրքի հրատարակումն ու շնորհանդեսը: Սկզբում ամերիկացի գրողը որոշել էր գիրքը հրատարակել 2006-ին, այնուհետեւ՝ 2007-ին: Բայց այդպես էլ այն տեղի չունեցավ եւ միայն երկու տարի անց Բրաունը կրկին խոսեց «Կորցած խորհրդանիշ» վեպի մասին:**

**Գրքի հրատարակության հետաձգման կապակցությամբ էլ ամերիկյան զանգվածային լրատվամիջոցները տարբեր վարկածներ են ներկայացնում: Մի մասի կարծիքով՝ հեղինակի ընկերները խորհուրդ են տվել ընդհանրապես մոռանալ գրքի հրատարակության մասին՝ կանխատեսելով մեծ աղմուկ, մյուս մասն էլ առաջարկել է սպասել մինչեւ «Դա Վինչիի ծածկագիրը» գրքի եւ ֆիլմի շուրջը ծավալված աղմուկը կհանդարտվի:**

**Բրաունը համարվում է ամերիկյան ժամանակակից գրականության լավագույն ու ամենահայտնի դեմքերից մեկը: Նրա երկու գրքերը համարվել են բեսթսելլերներ: 2003-ին հրատարակված «Դա Վինչիի ծածկագիրը» ավելի քան 54 շաբաթ գրավել է The New York Times թերթի բեսթսելլերների ցուցակը. վաճառվել է գրքի 81 մլն օրինակ:**

Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Հայ բռնցքամարտիկներից երկուսը քառորդ եզրափակիչում են



Լեհաստանի Շեցին քաղաքում մեկնարկել է բռնցքամարտի Եվրոպայի երիտասարդական առաջնությունը, որի պարգեւները վիճարկողների մեջ են նաեւ Հայաստանի 8 բռնցքամարտիկներ: Մեր հավաքականի կազմում են Կարեն Այլազյանը (51 կգ), Ալեքսանդր Շահյանը (54 կգ), Արամ Ավագյանը (57 կգ), Վլադիմիր Մարգարյանը (64 կգ), Հարություն Աբրահամյանը (69 կգ), Գոռ Արիստակեսյանը (75 կգ), Ազատ Դավթյանը (91 կգ) եւ գերծանրքաշային Հովհաննես Օհանյանը:

Ռինգ դուրս եկած հայաստանցի 5 բռնցքամարտիկներից երեքը շարունակում են պայքարը: Երկու մենամարտ է անցկացրել մինչեւ 64 կգ քաշային Վլադիմիր Մարգարյանը: Առաջինում նրա մրցակիցը Ֆրանսիան ներկայացնող Դավիթ Պարոնն էր: Հայ բռնցքամարտիկը վստահ անցկացրեց մենամարտը եւ հաղթեց 5-1 հաշվով: 1/8 եզրափակիչում Մարգարյանը մրցեց ադրբեջանցի Թամեռլան Աբդուլաիեւի հետ: Այս մենամարտում եւս հայ մարզիկն իրեն լավագույնս դրսեւորեց` մեծ առավելության հասնելով մրցակցի նկատմամբ (8-1): Քառորդ եզրափակիչում Վլադիմիրի մրցակիցը կլինի իր հայրենակիցը` Գերմանիան ներկայացնող Արայիկ Մարությանը: Վերջինս մեծ առավելությամբ հաղթանակներ է տոնել մոլդովացի Վիկտոր Կարապցեւիչի (7-0) եւ թուրք Այդին Մուհամեթի (5-1) նկատմամբ: Կարծում ենք, որ հայ բռնցքամարտիկներն իրար արժանի մրցակից կլինեն:

Քառորդ եզրափակիչ է մտել նաեւ Կարեն Այլազյանը (51 կգ): Դրա համար նրան հարկ եղավ ընդամենը մեկ մենամարտ անցկացնել: Նա 4-1 հաշվով պարտության մատնեց Ալեսանդրո Գուբեդդուին (Իտալիա): Հաջորդ փուլում նրա մրցակիցը կլինի Մոլդովայի ներկայացուցիչ Իգոր Օսիպովը, որը 2-1 հաշվով հաղթել է բելառուսցի Իվան Ֆիլուրենկային:

Առաջին մենամարտը հաջող անցկացրեց նաեւ 57 կգ քաշային Արամ Ավագյանը: Նա մեծ առավելության հասավ լիտվացի Յոնաս Կազուկաուսկասի նկատմամբ (15-2): 1/8 եզրափակիչում նրա մրցակիցը կլինի ռումինացի Մարին Դրագոսը: Վերջինս 4-0 հաշվով պարտության է մատնել բելառուսցի Վիտալի Կոնանաուին:

Անհաջողության մատնվեցին Ալեքսանդր Շահյանը (54 կգ) եւ Գոռ Արիստակեսյանը (75 կգ), որոնք առաջին մենամարտերում պարտվելով, դուրս մնացին հետագա պայքարից: Շահյանը 3-7 հաշվով զիջեց ադրբեջանցի Էլվին Իսաեւին, իսկ Արիստակեսյանը պարտվեց ուկրաինացի Վլադիսլավ Վոյտալյուկին:

# Իսինբաեւան ձախողվեց, իսկ Բեկելեն իր բարձրության վրա էր

Բեռլինում ընթացող թեթեւ ատլետիկայի աշխարհի առաջնությունում մարզասերների ուշադրության կենտրոնում էին կանանց ձողացատկի մրցումները: Բոլորն անհամբերությամբ էին սպասում օլիմպիական խաղերի չեմպիոնուհի, աշխարհի բազմակի ռեկորդակրուհի Ելենա Իսինբաեւայի ելույթին: Ավելորդ է նշել, որ նա հաղթողի գլխավոր հավակնորդն էր: Սակայն բոլորի համար անսպասելի, օլիմպիական կրկնակի չեմպիոնուհին մրցումներում ձախողվեց: Նա առաջին փորձի ժամանակ չկարողացավ հաղթահարել 4,75 մետր բարձրությունը, իսկ հաջորդ երկու փորձերի ժամանակ նրան չենթարկվեց նաեւ 4,80 մետրը: Այսպիսով, Իսինբաեւան մնաց առանց մեդալի:

Աշխարհի չեմպիոնուհի հռչակվեց լեհ մարզուհի Աննա Ռոգովսկայան, որը ցույց տվեց 4,75 մ արդյունք: 2-րդ տեղը գրավեց ամերիկուհի Չելսի Ջոնսոնը, 3-րդ մրցանակակիր դարձավ լեհ Մոնիկա Պիրեկը: Երկուսն էլ հաղթահարեցին 4,65 մ բարձրությունը:

Ելենա Իսինբաեւան իր անհաջողությունը հետեւյալ կերպ է բացատրել. «Այսօր իմ օրը չէր: Հենց սկզբից իմ մոտ չստացվեց, թեեւ նախավարժանքի ժամանակ վստահ հաղթահարել էի 4,70 մ բարձրությունը: Հարկավոր է ամբողջովին կենտրոնանալ սպորտի վրա, այլ բաների վրա ուշադրությունը չշեղել: Եթե դա այդպես չէ, ապա սպորտը քեզնից վրեժխնդիր է լինում: 27 տարեկան եմ, ամուսնացած չեմ եւ բնականաբար անձնական կյանք ունեմ, որն ինձ շեղում է աշխատանքից: Հարկավոր է հանգիստ վերլուծել տեղի ունեցածը եւ առաջ շարժվել: Այս տարի դեռ երկու մրցումների պետք է մասնակցեմ: Հարկավոր է վերանայել անձնական կյանքին իմ մոտեցումը»:

Ի տարբերություն Իսինբաեւայի, օլիմպիական եռակի չեմպիոն, եթովպիացի Կենենիսա Բեկելեն իր բարձրության վրա գտնվեց: Նա 4-րդ անգամ անընդմեջ նվաճեց աշխարհի չեմպիոնի տիտղոսը 10.000 մետր վազքում: Նրա արդյունքը (26 րոպե 46,31 վրկ) աշխարհի առաջնությունների պատմության մեջ լավագույնն է: Արծաթե մեդալի արժանացավ Զերսենայ Թադեսեն, բրոնզը բաժին հասավ քենիացի Մոզես Մասաիին:



Կանանց 100 մ վազքում ոսկե մեդալ նվաճեց ճամայկացի արագավազորդ Շելի-Էն Ֆրեզերը` ցույց տալով այս մրցաշրջանի լավագույն արդյունքը (10,73 վրկ): Նրան ընդամենը 0,02 վրկ-ով զիջեց իր հայրենակցուհին` Քերոն Սթյուարտը, իսկ բրոնզե մեդալը բաժին հասավ ամերիկուհի Կարմելիտա Ջեթերին:

Կանանց հեռացատկի մրցումներում հաղթող ճանաչվեց կուբացի Սավինյեն` 14,95 մետր: Տղամարդկանց մուրճի նետման մրցումներում աշխարհի չեմպիոն հռչակվեց Սլովենիայի ներկայացուցիչ Պրիմոշ Կոզմուսը, որը ցույց տվեց լավագույն արդյունքը (80,84 մետր): Երկրորդ տեղը գրաված լեհ մարզիկ Շիմոն Ցիոլկովսկին չեմպիոնին զիջեց 1,54 մ-ով: Դրամատիկ պայքար էր ծավալվել բրոնզե մեդալի համար: Հաջողությունն ուղեկցեց ռուսաստանցի մրճանետորդ Ալեքսեյ Զագորնուն, որը վերջին փորձի ժամանակ ցույց տվեց 78,09 մետր արդյունք: Նշենք, որ Ռուսաստանի ներկայացուցիչը վերջին 8 տարվա ընթացքում առաջին անգամ է արժանանում պարգեւի այս մրցաձեւում:

# «Միլանը» նվաճեց Բեռլուսկոնիի գավաթը

Իտալական «Միլանն» էլ նոր մրցաշրջանի սկիզբը նշանավորեց Լուիջի Բեռլուսկոնիի գավաթի նվաճմամբ: Միլանցիները համառ պայքարում, հետխաղյա 11 մ հարվածներով պարտության մատնեցին «Յուվենտուսին»: Խաղի հիմնական ժամանակն ավարտվեց ոչ-ոքի: 28-րդ րոպեին «Յուվենտուսին» առաջ մղեց Դիեգոն, սակայն 2-րդ խաղակեսում Պատոն վերականգնեց հավասարակշռությունը: «Միլանը» 11-րդ անգամ դարձավ պատվավոր մրցանակի տերը: Գավաթը հանձնեց «Միլանի» սեփականատեր եւ Իտալիայի վարչապետ Սիլվիո Բեռլուսկոնին:

Պատվավոր այս մրցանակը սահմանել է Սիլվիո Բեռլուսկոնին ի հիշատակ իր հոր: Մրցումներն անցկացվում են 1991-ից: Սկզբնական շրջանում ենթադրվում էր, որ մրցանակը պետք է վիճարկեն «Միլանն» ու չեմպիոնների լիգայի այս տարվա հաղթողը: Այդպես էր 1992-1994-ին, երբ միլանցիները մրցեցին «Ինտերի», Մադրիդի «Ռեալի» եւ Մյունխենի «Բավարիայի» հետ: Սակայն հետագայում «Միլանի» մշտական մրցակիցը դարձավ Թուրինի «Յուվենտուսը»: Մինչ օրս մրցանակի խաղարկությունը անցկացվել է 19 անգամ: 8 անգամ հաղթող է ճանաչվել Թուրինի «Յուվենտուսը»: Հետաքրքրական է, որ մրցակիցների հանդիպումից 3 օր առաջ «Միլանն» ու «Յուվենտուսը» մրցել էին միմյանց հետ «Տիմ Տրոֆի» մրցանակի համար: Այդ խաղում հաջողությունն ուղեկցել էր «Յուվենտուսին», որը հաղթել էր 2-0 հաշվով:

## ՇԱԽՄԱՏ

# Արոնյանն ու Հակոբյանը հաշտություն կնքեցին

Ձերմուկում ընթացող Գրան պրիի 9-րդ տուրում էլ հայ շախմատիստներն իրենց պարտիաներն ավարտեցին ոչ-ոքի: Լեւոն Արոնյանը սեւերով 34-րդ քայլին հաշտություն կնքեց Էթիեն Բաքրոյի հետ, իսկ Վլադիմիր Հակոբյանը 49-րդ քայլին ոչ-ոքի համաձայնեց Դմիտրի Յակովենկոյի հետ մրցավեճում:

Մրցաշարի առաջատարներն էլ կիսեցին միավորները: Պետեր Լեկոն Գատա Կամսկու հետ մրցավեճում հավերժական շախի շնորհիվ հասավ ոչ-ոքի արդյունքի: Իսկ Վասիլի Իվանչուկը սեւերով հաշտություն կնքեց Պավել Էլյանովի հետ: Խաղաղ ելք ունեցան նաեւ Գելֆանդ-Ալեքսեեւ, Կարյակին-Ինարկիեւ պարտիաները: Միակ հաղթանակն իր օգտին գրանցեց Ռուստամ Կասիմջանովը` պարտության մատնելով Իվան Չեպարինովին:

9 տուրից հետո մրցաշարում եռիշխանություն հաստատվեց: Իվանչուկին եւ Լեկոյին միավորներով հավասարվեց Կասիմջանովը: Նրանք ունեն 6-ական միավոր: Արոնյանը Կարյակինի, Ալեքսեեւի եւ Էլյանովի հետ վաստակել է 5 միավոր: Հակոբյանի օգտին գրանցված է 3,5 միավոր: Մրցաշարի ավարտին մնաց 4 տուր:





# Առաջատարների խմբում նեղվածք է

Աբու Դաբիի շախմատի մրցաշարի 6-րդ տուրում առաջատարների շարքում գտնվող Աշոտ Անաստասյանն ու Զավեն Անդրեասյանն իրենց պարտիաներն ավարտեցին ոչ-ոքի: Անաստասյանը հաշտություն կնքեց միջազգային վարպետ, հնդիկ շախմատիստ Ռահման Լակսմանի հետ, իսկ Զավենը խաղաղ դաշն կնքեց եգիպտացի Բասեմ Ամինի հետ: Մյուս առաջատարն էլ` ռուսաստանցի Ալեքսանդր Ռախմանովը եւս ոչ-ոքի ավարտեց մրցավեճը Էհշան Ղաեմի հետ: 6 տուրից հետո 9 շախմատիստներ, որոնց թվում են Աշոտ Անաստասյանը, Զավեն Անդրեասյանն ու Հրանտ Մելքումյանը, 5-ական միավորով գլխավորում են աղյուսակը: Մելքումյանը պարտության մատնեց Էր Նիրմալին:

4,5 միավոր ունի Հրայր Սիմոնյանը, որը ոչ-ոքի խաղաց Վիանի Անտոնիոյի հետ: Տուրը հաջող էր Հայաստանի չեմպիոնուհի Լիլիթ Գալոյանի համար, որը հաղթելով Ալի Աբդուլքարիմին, վաստակեց 4 միավոր: 7-րդ տուրում կրկին առաջատարները կմրցեն միմյանց հետ: Անդրեասյանի մրցակիցը կլինի Լակսմանը, իսկ Անաստասյանը ուժերը կչափի գրոսմայստեր Անտոն Ֆիլիպովի հետ: Հրանտ Մելքումյանի մրցակիցը կլինի Ալեքսանդր Ռախմանովը:

# Մնաց մեկ տուր

Մեկ տուր մնաց «Ակրոպոլիսի գավաթի» խաղարկության ավարտին, որում հանդես է գալիս Էլինա Դանիելյանը: 8-րդ տուրում նա սեւերով հաղթեց Ալիսա Մարիչին եւ վաստակեց 5 միավոր: Աղյուսակը 6-ական միավորով գլխավորում են Բորկի Պրեդոեւիչը, Խրիստոս Բանիկասը, Իոանիս Պապաիոանուն եւ Աթանաս Կոլեւը:

# «Բարսելոնը» սկսեց հաղթանակով

Ավանդույթի համաձայն Իսպանիայում ֆուտբոլային մրցաշրջանը սկսվում է Սուպերգավաթի խաղարկությամբ: Նոր մրցաշրջանը հաղթանակով սկսեց երկրի չեմպիոն «Բարսելոնը», որը Սուպերգավաթի առաջին խաղում Բիլբաոյում 2-1 հաշվով պարտության մատնեց «Ատլետիկին»: Խոսեպ Գվարդիոլայի սաներն առաջին խաղակեսից հետո պարտվում էին 0-1 հաշվով: Դաշտի տերերին հաշվի մեջ առաջ էր մղել Դե Մարկոսը: Սակայն ընդմիջումից հետո Խավին ու Պեդրոն երկու գոլ խփեցին եւ ապահովեցին «Բարսելոնի» հաղթանակը: «Բարսելոնը» լավ նախադրյալներ ստեղծեց Սուպերգավաթը նվաճելու համար: Պատասխան խաղը կկայանա օգոստոսի 23-ին Բարսելոնի «Կամպ նոու» մարզադաշտում:

# Մարեյը շրջանցեց Նադալին

Մոնրեալի թենիսի մրցաշարի հաղթող ճանաչվեց բրիտանացի Էնդի Մարեյը, որը եզրափակիչում հաղթեց արգենտինացի Խուան Մարտին Դել Պոտրոյին (6-7, 7-6, 6-1): Այդ հաղթանակի շնորհիվ նա թենիսիստների համաշխարհային դասակարգման ցուցակում շրջանցեց իսպանացի Ռաֆայել Նադալին եւ 9250 միավորով զբաղեցրեց 2-րդ տեղը: Առաջատարը շվեյցարացի Ռոջեր Ֆեդերերն է (11040 միավոր): Դավիթ Նալբանդյանը, որ վնասվածքի պատճառով մի քանի ամիս կորտ դուրս չի գալիս, ցուցակում 14-րդն է:

# Ֆուտբոլային թիմն աճուրդի է հանվել

eBay համացանցային աճուրդի պատմության մեջ առաջին անգամ վաճառքի է հանվել Լիվերպուլի «Տրենմեր Ռովերս» ֆուտբոլային թիմը, որը հանդես է գալիս 2-րդ լիգայում: Թիմի սկզբնական գինը 10 մլն դոլար է: Թիմն աճուրդի է հանել սեփականատերը` ամերիկյան «Դորնոչ Կեպիտալ» ընկերությունը, որի տարածած հայտարարության մեջ նշվում է, որ ակումբը պարտքեր չունի եւ ընդունակ է շատ շուտ եկամուտ ապահովել: Թիմի խաղացողների եւ երկրպագուների համար շատ անսպասելի էր աճուրդի հանելու որոշումը: Ակումբի ներկայացուցիչ Պիտեր Ջոնսոնը հայտարարել է, որ դա սխալ որոշում է, որը հարված է հասցնում անգլիական ֆուտբոլի դիրքերին:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀՈՎՍԵՓՅԱՆԸ

# «Ինչպե՞ս է Ռուսաստանը զենք վաճառում Հայաստանին»

## *Ռիչարդ Կիրակոսյանի հետեւությունը հարցականով է արշավանքել թուրքական կայքէջը*

Հարցադրումը կատարել է Նյու Յորքի Turkishny.com կայքէջը օգոստոսի 17-ի նույն վերնագրով հրապարակված նյութում: Հրապարակման համար հիմք է ծառայել Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոնի տնօրեն Ռիչարդ Կիրակոսյանի ելույթը օգոստոսի 13-ին «Հայ-թուրքական հարաբերությունները՝ անցյալն ու ապագան» թեմայով Երեւանում կազմակերպված սեմինարում, որին հաջորդ օրը արձագանքել էր թուրքական մամուլը, վկայակոչելով Panarmenian.net-ին:

Ըստ թուրքական մամուլի, Կիրակոսյանը ելույթում ասել է. «Մինչ այդ Անկարան գաղտնի պայմանագրեր է ստորագրել Մոսկվայի հետ, թույլ տալով Ռուսաստանին օգտագործել Թուրքիայի օդային տարածքը Գյումրիի ռուսական ռազմաբազա զենք առաքելու համար»: Ի դեպ, օգոստոսի 13-ին սեմինարը լուսաբանելիս, Panarmenian.net-ը Կիրակոսյանին վերագրվող այս խոսքերին տեղ չէր տվել: Իսկ օգոստոսի 18-ին Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոնը հաղորդագրությամբ զգուշացրել է. «Թերեւս հայկական սկզբնաղբյուրը մասամբ ճշգրիտ չէր, քանի որ ՌԱՀՀԿ տնօրենն ասել էր, որ «ներկայումս թուրք եւ ռուս պաշտոնյաները բանակցություններ են վարում երկկողմ պայմանագրի շուրջը, եւ եթե համաձայնություն ձեռք բերվի թուրք-հայկական փակ սահմանի բացման վերաբերյալ, ապա ռուսական ռազմական ուժերը հնարավորություն կստանան մուտք գործելու Գյումրիի հենակետ՝ օգտագործելով թուրքական օդային եւ ցամաքային տարածքը»: Ամենաուշագրավն այն է, որ Թուրքիայի ԱԳՆ խոսնակ Բուրաք Օզյուգյարգինը քննադատեց Կիրակոսյանի մեկնաբանությունը՝ նշելով, որ «սա բացահայտ սադրանք է՝ ուղղված Թուրքիայի եւ Ադրբեջանի բարեկամական հարաբերությունների խաթարմանը»: Քանի որ թուրք պաշտոնյան, ըստ էության, չժխտեց Կիրակոսյանի մեկնաբանությունների էությունը, դա մեկնարկ տվեց թուրքական առաջատար ընդդիմադիր թերթերի բուռն կոչերին, որոնք պաշտոնական Անկարայից պահանջեցին անհապաղ վերջ տալ Ռուսաստանի հետ բանակցություններին»:

Նախ պետք է ասել, որ ռուս-թուրքական երկկողմ պայմանագրի շուրջը համաձայնություն ձեռք բերելու մասին արտահայտվելն ու դա Թուրքիայի հայկական սահմանի բացումով պայմանավորելը ոչ թե մեկնաբանություն է, այլ հետեւություն: Ավելին, եթե այդ հետեւությունը չի հիմնավորվում, ապա դառնում է պարզունակ կանխագուշակում: Դա խաղաքական կանխատեսում դարձնելու համար պետք է հիմնավորել: Իսկ հիմնավորելու համար անհրաժեշտ է որեւէ պետական կառույցի, ասենք, ամերիկյանի, աջակցությունը, որովհետեւ ավելի քան գաղտնի են վարվում գաղտնի պայմանագրի ստորագրմանը միտված երկկողմ բանակցությունները:

Այսինքն՝ այս կարգի գաղտնի բանակցությունների մասին կարելի է իմանալ միայն իրազեկ որեւէ պետական կառույցի տրամադրած հետախուզական տվյալների միջոցով, կամ էլ անհիմն կանխագուշակումը որպես առաջադրանքի կատարման միջոց ծառայեցնել որոշակի նպատակին: Թե ՆԱՏՕ-ի անդամ Թուրքիան ինչպե՞ս է օդային եւ ցամաքային տարածքը Ռուսաստանին տրամադրելու, այն էլ՝ Հայաստանում տեղակայված ռազմաբազա զենք մատակարարելու համար, դժվար է պատկերացնելը: Բայց որ Թուրքիայի արտգործնախարարության խոսնակը պաշտոնապես «բացահայտ սադրանք» է որակել Կիրակոսյանի խոսքերը, ակնհայտ է:

Եթե սա ոչ թե ժխտելու, այլ չժխտելու ձեւ է, ինչպես ենթադրվում է Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոնի հաղորդագրության մեջ, ապա ժխտելն ինչպե՞ս է լինում: Ի դեպ, բացի Թուրքիայի արտգործնախարարությունից, Մոսկվայի եւ Անկարայի միջեւ գաղտնի պայմանագրի ստորագրման հնարավորության մասին Ռիչարդ Կիրակոսյանի «մեկնաբանությունների էությունը» ժխտել են նաեւ ադրբեջանցի փորձագետները:

Հենց այդ հարցն է արծարծում Turkishny.com հրապարակումը, որտեղ մասնավորապես ասված է. «Այն պնդումը, թե Ռուսաստանը Գյումրիի ռազմաբազա զենք մատակարարելու համար Թուրքիայի հետ գաղտնի համաձայնություն է ձեռք բերել, հերքեցին նաեւ ադրբեջանցի փորձագետները: Նրանք հիշեցին, որ Ռուսաստանը Հայաստան զենք է առաքում Իրանի տարածքով: Անցյալ շաբաթ թուրքական մամուլում լայն արձագանք գտած այս պնդումները կտրականապես ժխտել էր Թուրքիայի արտգործնախարարությունը: Իսկ պնդումների հեղինակը Հայաստանում Թուրքիայի գծով փորձագետ Ռիչարդ Կիրակոսյանն է:

Ադրբեջանական 1News.az կայքէջին արած հայտարարության մեջ ռազմական հարցերի փորձագետ Ուզեիր Ջաֆարովը նշել է. «Ռուսաստանը Հայաստանին զենք է առաքում երկու երթուղիներով: Առաջին երթուղին Կասպից ծովն է, իսկ երկրորդը՝ Ղազախստանի, Տաջիկստանի եւ Իրանի տարածքը: Իրանը Ռուսաստանի համար Հայաստանին զենք մատակարարելու միակ երկիրն է: Մատակարարումից հետո ռուսական այդ զենքն անցնում է անջատողական Լեռնային Ղարաբաղի վարչակարգի ձեռքը»:

Նրան հաստատեց ադրբեջանցի մեկ այլ փորձագետ Յլդրըմ Մամեդովը, ասելով. «ԱՄՆ-ը տիեզերքից կատարելապես վերահսկում է Կովկասն ու Կասպից ծովի ավազանը: Լավ կլիներ, եթե Պենտագոնը Հայաստանին առաքվող ռուսական զենքի մասին հետախուզական տվյալները տրամադրեր Բաքվին»:

Հայաստանում գործող Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների կենտրոնի տնօրեն Ռիչարդ Կիրակոսյանը Երեւանում հայ-թուրքական հարաբերություններին նվիրված սեմինարում պնդել էր, որ Անկարան Մոսկվայի հետ ստորագրել է գաղտնի պայմանագիր, համաձայն որի, Հայաստանում տեղակայված ռուսական բազա զենք առաքելու համար թուրքական կողմը ռուսականին թույլ է տվել օգտագործել Թուրքիայի տարածքը»:

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

# Բելառուսի Հանրապետության բանկերի արհմիությունների ներկայացուցիչները Երեւանում

Օգոստոսի 17-23-ը Երեւանում են Բելառուսի Հանրապետությունից ժամանած Բելառուսի բանկերի արհմիությունների ներկայացուցիչները՝ Բելառուսի բանկային եւ ֆինանսական կազմակերպությունների արհմիությունների ֆեդերացիայի հանրապետական կոմիտեի նախագահ Ալեքսանդր Լիխտարովիչը, Բելվնեշէկոնոմբանկի նախագահի տեղակալ եւ Բելառուսի բանկերի միության նախագահի տեղակալ Գենադի Խոխլովը եւ Բելինվեստբանկի նախագահի տեղակալ եւ բանկի արհմիության նախագահ Ալեքսանդր Բորովիկը:

Այցի նպատակն է՝ Հայաստանի բանկերի արհմիությունների աշխատանքներին ծանոթանալը եւ փորձի փոխանակումը, ինչպես նաեւ պայմանագրերի ստորագրումը:

Այցի շրջանակներում նախատեսված են մի շարք հանդիպումներ ՀՀ կենտրոնական բանկի, Զարգացման հայկական բանկի, «Անելիք» բանկի, Հայաստանի բանկերի միության, Հայաստանի արհեստակցական միությունների կոնֆեդերացիայի (ՀԱՄԿ) ղեկավարության հետ:

*ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն*

**«Էկոնոմիկա եւ Իրավունք» ամսագիր**

Ինչպես անթերի վարել հաշվապահությունը եւ խուսափել հաշվապահական, հարկային եւ իրավաբանական սխալներից

♦ *Օրենսդրական նորություններ* ♦ *Պարզաբանումներ* ♦ *Խորհրդատվություն*

**«Էկոնոմիկա եւ Իրավունք» - ամսագիր ղեկավարների եւ մասնագետների համար**

**Բաժանորդագրվելու համար զանգահարեք 54-24-81, 54-74-81**

## ԾԱՆՈՒՑՈՒՄ

Սույն հայտարարությունը տպագրվում է 2007 թ. ապրիլի 24-ին Տնտեսական դատարանի կողմից ընդունված որոշման համաձայն:

### Հայտարարություն

ԱրմենՏել ՓԲԸ-ն հայտնում է, որ 10.03.2003 մինչեւ 11.06.2004թ. ընկած ժամանակահատվածում Xter.net ապրանքային նշանի տակ գործող Էքսոլթ ՍՊ ընկերության հեռազանգով մատուցվող ինտերնետային ծառայություններից օգտվող հաճախորդների կապ հաստատելու հարցում դժվարություններ առաջացել են ոչ թե Էքսոլթ ՍՊ ընկերության մեղքով, այլ ԱրմենՏել ՓԲ ընկերության կողմից ապօրինի կարգով կապուղիներ չտրամադրելու եւ/կամ կապուղիներ անջատելու պատճառով:

ԱրմենՏել ՓԲ Ընկերությունը հայցում է անհարմարություններ կրած բաժանորդների եւ Էքսոլթ ՍՊ ընկերության ներողամտությունը եւ պարտավորվում է հետագայում թույլ չտալ նման խախտումներ:

**«Է. Պ. Գ.» Էջմիածնի պահածոների գործարան» ԲԲԸ**
**ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ**
**առ 31.12.2008 թ.**

| ԱԿՏԻՎ | Տող | Նախորդ տարվա | Հաշվետու տարվա վերջին |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| I. Ոչ ընթացիկ ակտիվներ | | | |
| Հիմնական միջոցներ | 010 | 208776 | 334833 |
| Անավարտ ոչ ընթացիկ նյութ. ակտիվներ | 020 | | |
| Ոչ նյութական ակտիվներ | 030 | 23 | 171 |
| Բաժնեմաս. մեթ. հաշվառվող ներդրումներ | 040 | | |
| Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ | 050 | 308 | 308 |
| Հետաձգված հարկային ակտիվներ | 060 | | |
| Այլ ոչ ընթացիկ ակտիվներ, այդ թվում՝ | 070 | 4064 | 4133 |
| Նվազագույն շահութահարկի գծով | 071 | 4064 | 4133 |
| Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ | 080 | 213171 | 339445 |
| II. Ընթացիկ ակտիվներ | | | |
| Նյութեր | 090 | 82151 | 72928 |
| Արագամաշ առարկաներ | 10 | 1905 | 822 |
| Անավարտ արտադրություն | 120 | | |
| Արտադրանք | 130 | 44333 | 10443 |
| Ապրանքներ | 140 | | |
| Տրված ընթացիկ կանխավճարներ | 150 | 8351 | 2480 |
| Դեբիտոր. պարտքեր վաճառքների գծով | 160 | 77506 | 70389 |
| Կարճաժամ՝ դեբիտոր. պարտքեր բյուջեին | 170 | 15323 | 711 |
| Այլ դեբիտորական պարտքեր | 180 | | |
| Ընթացիկ ֆինանսական ներդրումներ | 190 | 10962 | 0 |
| Դրամ. միջոցներ եւ դրանց համարժեքներ | 200 | 12163 | 911 |
| Այլ ընթացիկ ակտիվներ, այդ թվում՝ | 210 | 1848 | 12416 |
| Ընդամենը ընթացիկ ակտիվներ | 220 | 254542 | 171100 |
| Հաշվեկշիռ | 230 | 467713 | 510545 |
| **ՊԱՍԻՎ** | | | |
| III. Սեփական կապիտալ | | | |
| Կանոնադրական կապիտալի զուտ գումար | 240 | 20390 | 20390 |
| Էմիսիոն եկամուտ | 250 | | |
| Վերագնահատումից տարբերություններ | 260 | 302288 | 332823 |
| Կուտակված շահույթ | 270 | (178194) | (202899) |
| Պահուստային կապիտալ | 280 | | |
| Սեփական կապիտալի այլ տարրեր | 290 | | |
| Ընդամենը սեփական կապիտալ | 300 | 144484 | 150314 |
| IV. Ոչ ընթացիկը պարտավորություններ | | | |
| Երկարաժամկետ բանկ. վարկեր եւ փոխառ. | 310 | 248852 | 86 |
| Հետաձգված հարկային պարտավորություններ | 320 | 30535 | |
| Ոչ ընթացիկ պահուստներ | 340 | | |
| Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ | 350 | | |
| Ընդամենը ոչ ընթ. պարտավորություններ | 360 | 279387 | 86 |
| V. Ընթացիկ պարտավորություններ | | | |
| Կարճաժամկետ բանկային վարկեր | 370 | | 264555 |
| Կարճաժամկետ փոխառություններ | 380 | 37267 | 44887 |
| Կրեդիտորական պարտքեր գնումների գծով | 390 | 6291 | 9813 |
| Ստացված ընթացիկ կանխավճարներ | 400 | | 30673 |
| Կարճաժամ. կրեդիտոր. պարտքեր բյուջեին | 410 | 206 | 258 |
| Կարճաժամ. կրեդիտ. պարտքեր սոցապ գծով | 420 | | 294 |
| Կրեդիտոր. պարտքեր աշխատավարձի գծով | 430 | 78 | 1608 |
| Կարճ. կրեդիտոր. պարտքեր մասնակիցներին | 440 | | |
| Այլ կրեդիտորական պարտքեր | 450 | | |
| ընդամենը ընթացիկ պարտավորություններ | 490 | 43842 | 360145 |
| Հաշվեկշիռ | 500 | 467713 | 510545 |

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**
**2008 թ.**

| Ցուցանիշի անվանումը | Տող | Նախորդ տարի | Հաշվետու տարի | Նախորդ տարվա միջանկյալ | Հաշվետու տարվա միջանկյալ |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| Արտադրանքի, ... իրացումից հասույթ | 010 | 25450 | 103128 | 25450 | 103128 |
| Իրացված արտադրանքի, ... ինքնարժեք | 020 | (17621) | (87747) | (17621) | (87747) |
| Համախառն շահույթ (վնաս) | 030 | 7829 | 15381 | 7829 | 15381 |
| Իրացման ծախսեր | 040 | (1060) | (913) | (1060) | (913) |
| Վարչական ծախսեր | 050 | (12109) | (29137) | (12109) | (29137) |
| Արտադրանքի, ... իրացումից շահույթ (վնաս) | 060 | (5340) | (14669) | (5340) | (14669) |
| Գործառնական այլ եկամուտներ | 070 | 11411 | 22 | 11411 | 22 |
| Գործառնական այլ ծախսեր, այդ թվում՝ | 080 | (36785) | (4281) | (36785) | (4281) |
| Իրացված պաշարների ինքնարժեք | 081 | (8933) | | (8933) | |
| Հիմնական միջոցների մաշվածություն | 082 | (27752) | | (27752) | |
| Գործառնական շահույթ (վնաս) | 090 | (30714) | (18928) | (30714) | (18928) |
| Ֆինանսական ծախսեր | 100 | | (3372) | | (3372) |
| Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող | 110 | | | | |
| Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս), այդ թվում՝ | 130 | 51289 | (2405) | 51289 | (2405) |
| Ոչ ընթացիկ ակտիվների վաճառքից | 131 | | (8200) | | (8200) |
| Արտարժույթի փոխարժ. տարբ. | 132 | | | | |
| Սովորական գործունեությունից շահույթ (վնաս) | 140 | 20575 | (24705) | 20575 | (24705) |
| Արտասովոր դեպքերից շահույթ (վնաս) | 150 | | | | |
| Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի | 160 | 20575 | (24705) | 20575 | (24705) |
| Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում) | 170 | | | | |
| Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի | 180 | 20575 | (24705) | 20575 | (24705) |
| Մեկ բաժնետոմսին ընկնող բազային շահույթ (վնաս) | 190 | | | | |
| Մեկ բաժնետոմսին ընկնող շահույթ (վնաս) | 200 | | | | |

**ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**
**«Է. Պ. Գ.» Էջմիածնի պահածոների գործարան» ԲԲԸ**

Ես աուդիտի եմ ենթարկել «Է. Պ. Գ.» Էջմիածնի պահածոների գործարան» ԲԲԸ-ի հաշվապահական հաշվեկշիռը առ 01.01.2009 թ., ինչպես նաեւ հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը:

Ես աուդիտն անցկացրեցի ստանդարտների համապատասխան: Իմ կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները կազմակերպության ֆինանսական վիճակի առ 1-ը հունվարի 2009 թթ., ինչպես նաեւ հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների մասին տալիս են ճշմարիտ եւ իրական պատկերը:

«ԱԶ» ԱՇՈՏ ՄՈՎՍԵՍՅԱՆ

## Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

**Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմի ֆինանսատնտեսական վարչության առաջին կարգի մասնագետի թափուր պաշտոնի զբաղեցման համար անցկացվող բաց մրցույթի /Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմ/**

**ՀՀ դատախազության աշխատակազմում պետական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված հիմնական գործառույթների համառոտ նկարագիրը.**

իրավական ակտերի ու այլ փաստաթղթերի պահպանության եւ արխիվացման աշխատանքների իրականացնումը, անհրաժեշտ նյութեր եւ տեղեկատվություն նախապատրաստելը, փաստաթղթային սպասարկումը, փաստաթղթաշրջանառության վարման աշխատանքները, համակարգչային մուտքագրման եւ ելքագրման աշխատանքների իրականացումը, ինչպես նաեւ օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված իր լիազորություններից բխող այլ գործառույթներ իրականացնելը եւ այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ (սահմանափակումներ) կրելը:

**ՀՀ դատախազության աշխատակազմում պետական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների եւ աշխատանքային ունակությունների տիրապետման վերաբերյալ ներկայացվող պահանջները.**

ա) միջին մասնագիտական կրթություն, բ) իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի նվազագույն իմացություն, ինչպես նաեւ տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, գ) նվազագույն գիտելիքներ իր սպասարկման բնագավառի մասին, դ) համակարգչով աշխատելու ունակություն, ե) գրական հայերենի պատշաճ իմացություն:

***Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետն է «2» սեպտեմբերի 2009թ. :***

***Մրցույթն անցկացվելու է 2009թ. սեպտեմբերի 17-ին ժամը «1000»-ին ՀՀ գլխավոր դատախազության շենքում /ք.Երեւան, Վ.Սարգսյան 5/ :***

***Մրցույթի նախապատրաստական աշխատանքներն իրականացվում են ՀՀ գլխավոր դատախազության շենքում /ք.Երեւան, Վ.Սարգսյան 5, հեռախոս 511-627/ :***

**18.08.2009թ.**

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 18.08.2009, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյյան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: